

Բաժանորդագիրն կԱՆԻԻԿ՝ Թուրքիոյ համար տարեկան 50 դր2, Ռուսիոյ համար 50 րուպլի, ուրիշ երկիրներու համար 72 ֆր. վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն զրամի տեղ Օսմանեան Նաւակաղարում կ'ընդունուի:

ԾԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար զիմել

Առ ՏՏօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
Պոլիս, Պանդե-Գալոս, Թաշ Խան, Թիւ 50

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ե Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاند
ه نومروده «زاعيك» غزتهسى مديرى
بالاقاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
; CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻԻ 41

Շ Ա Ր Ա Թ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1892

Շ Ա Ր

ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՑ

— 1902 —

Է.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԳ. ԱԼԱՄԴԱՐԵԱՆՑ

(Շար. և վերջ 40րդ թիւէն)

Ներսէս Աշտարակեցին գամ քան ըզգամ գնահատելով Ալամդարեանց քահանային արժանիքը և կրթական ծառայութիւններն, Տփլիսու վանքի Նկեղեցւոյն Աւագ-Երէջ կ'ընտրէ գնա, և երբ Նորին Սրբազնութիւնն՝ Ռուսաց և Պարսից պատերազմին ժամանակ, տրամադրուած էր մեկնիլ յԵրևան 1826ին, Վրաստանի վիճակին հոգեւոր վարչութիւնն յանձնեց, կ'ըսեն, հայր Ալամդարեանցին, ինչպէս նաև Ներսիսեան Դպրանոցին վերապետութիւնը:

Ներսէս Արքեպիսկոպոս Աշտարակեցին երբ պատերազմէն վերջը, ծայրագոյն կառավարիչ բովանդակ հոգեւոր իշխանութեան Հայոց տիտղոսով վերադարձաւ ի Տփլիս, կարի գոհ մնալով Ալամդարեանցի պաշտօնավարութենէն, ի վարձատրութիւն՝ վարդապետական վեղար կուտայ Նորին Արժանապատուութեան(1) 1828ին, և այս օրէն Ալամդարեանց քահանայն կը լինի, ընդտակ Տէր-Յարութիւն վարդապետ:

Երջանկայիշատակ Աշտարակեցւոյն սոյն տարիներու պատմութիւնն արդարեւ խիստ չահագորգիւ և կարի հարուստ պիտի լինէր՝ եթէ գրուէր, սակայն այժմ թէ՛ մեր նպատակէն դուրս է, և թէ՛

(1) Տ. Գաբրիէլ Լաւագ-Քահանայ Պատկանեանն ալ Աշտարակեցի Ներսէս Արքեպիսկոպոսէն քահանայ ձեռնադրուած է ի Նոր-Նախիջևան, 1832 Յունվար 17ին, և որ վախճանեցաւ 1889 Ապրիլ 13ին ի Պետերբուրգ, 88րդ տարին դեռ նոր թեւակոխած:

զմեզ հեռուն կը տանի: Մեր կարծեօք՝ լաւագոյն է առանձին հատորով պատմութիւն կազմել և հրատարակել:

Ճիշդ այս թուականին՝ երբ Ներսէս Արքեպիսկոպոս բարձրագոյն հրամանաւ կ'երթար ի Պետարապիա և ի Նախիջևան, Ալամդարեանց վարդապետին ալ փայլուն աստղն գոգցես կը մտայլէր, և անթիկունք ու անպաշտպան մնալով՝ շատ վշտեր ու չարչարանքներ կը կրէր, այնչափ որ մինչեւ Հաղբատու վանքը՝ իբրև աքսոր կը յղուի ու կը բանտարկուի, ուր մահամբձ հիւանդագին տառապելով, Հաղբատու և Սանահնու վանուց միաբան սարկաւազ մը մարդասիրաբար կ'երթեկէ Ալամդարեանցի քով, և գլխով հիւանդ վարդապետին վրայ, իւրովսն կը ծառայէ և կը սատարէ:

Կ'աւանդուի թէ, եթէ այդ նախախնամեալ սարկաւազը չլինէր յայնժամ, Ալամդարեանցի վաղահաս մահն անխուսափելի պիտի լինէր:

Ինչ որ է, Ալամդարեանց կը կազդուրուի, առողջութիւնը կը վերահաստատուի. և Ներսէս Աշտարակեցւոյն ինդերանօք, այդ աքսորավայրէն արձակուելով, 1831ին. օգոստոս ամսոյն Տփլիս և անտի Պետարապիոյ վիճակին Գիշնէվ քաղաքը կ'երթայ:

Սոյն ականաւոր և քանքարաւոր վարդապետին վերոյիշեալ աքսորանքէն ազատուելու մասին, նոյն 1831 թուականին Զմիւռնայի Մսեր Մագիստրոս Մսերեանցի Տփլիսէն գրած մի գրութենէն հետեւեալ հակիրճ տողերը յառաջ կը բերեմ, իբրև ականատես պատմաբանի մը վկայութիւն.

«Յարութիւն վարդապետն Ալամդարեանց՝ որ մնայր ցարդ ի Հաղբատ անդր, կոչեցաւ այսր ի սրբազան Դիտէս առ ի ճանապարհորդել և աստի առ սրբազան Արքեպիսկոպոսն Ներսէս ի Գիշնէվ: Այս եղև ըստ թոյլտուութեան կայսերական հրամանին ծանուցելոյ ի գրութենէ գլխ-

խաւոր հրամանատարի առ տեղապահն հրամանատարութեան Կովկասեան գաւառաց Նիկիտա Բանդարտէվ:»

Նոր-Նախիջևանու Ս. Սաչ վանուց Վանահայր կարգուած է Ալամդարեանց Յարութիւն վարդապետ 1833ին. Յաջորդ տարին, 1834 Մայիս 14ին, աւագակներէն կը խոշտանգուի, և մետասանօրեայ խօթութենէ մը զինի կը վախճանի և կը թաղուի նոյն վանուց տաճարի աջակողմեան դրան քովը, որոյ հանդէպ հանգուցած են Հիւսիսափայլ խմբագրապետ Ստեփաննոս Նազարեանցի անրաժանելի և անուանի աշխատակցին մարմինն:

Ահաւասիկ ճշոյգ մը կրթական աշխատաւորներ, որ մի և նոյն Ս. Սաչին հովանաւորութեան տակ հանգչած են:

Ալամդարեանց՝ իբրև բանաստեղծ՝ նըշանաւոր տեղ կը բռնէ:

Կարդացած չեմ դեռ սակայն իւր չափաբերական երկասիրութիւնները: Յարութիւն վ. Ալամդարեանց բնական հանճար ունէր: Լեզուագէտ էր, գիտէր հայերէնէ զատ՝ ռուսերէն: Գաղղիարէն և պարսկերէն ալ կը հասկնար կ'ըսեն: Ընդ երկար ի Մոսկուա և ի Տփլիս պաշտօնավարած էր, մանաւանդ Ներսէսեան Գալբանոցի մէջ ունեցած տեսչական պաշտօնավարութիւնը մինչեւ 1831 խիստ արդիւնաւոր եղած է:

Ներսիսեան դպրանոցի վերադասութիւնը շատերն ըրած են: Մեր գիտցած օրերէն դուրս՝ Տէր Գաբրիէլ Աւագ քահանայ Պատկանեանցն(1) ալ նոյն պաշտօնը մէկ ու կէս տարի կատարած է 1845ին:

Ստեփաննոս Նազարեանց ալ միևնպէս պաշտօնին կոչուած է, ինչպէս նաև Մի-

(1) Տէր-Գաբրիէլ Պատկանեան՝ սոյն միջոցին ի Տփլիս տպարան բացած է, և 1850 սեպտեմբերէն սկսեալ մինչ 1851 Ապրիլի վերջ, շարքաթիր Արարատը հրատարակած է, ընդ ամենը՝ 33 թիւ:

քայլէ Պատկանեանց, որ հրաժարած է 1851ին: Նոյնպէս սոյն վերատեսչական պաշտօնը վարած են ոչ նուազ արժանաւորութեամբ հոգեւոյս Շահնազարեանց կարապետ վարդապետ, և Պաշտօնակալտար տեսչի անուամբ Գարեգին Մուրատեանց (Ամեն Տ. Մելքիսեդեկ սրբազան Մուրատեանց), ինչպէս նաև Յակոբ Կարինեանց(1), Արզանեանց, Ղայթմազեանց, Պետրոս Սիմոնեանց, Ա. Նահապետեանց և Սպէնդէրեան:

Եւ սակայն սոյն բոլոր ծանօթ անձնաւորութեանց մէջ՝ միայն երկու անձնաւորութիւններ կան, որոց յիշատակն ու արդիւնաւորութիւնն՝ յաճախ օրհնութեամբ կը յիշուին ու կը շնորհակցին:

Հարկ է յիշել թէ, առաջինն է՝ ազնուական Պարոն Պետրոս Շահնազարեանց պաշտօնավարութիւնը, որոյ օրով դաստիարակութեան ինդիւն Ռուսահայոց մէջ՝ մարմին և արիւն դարձած է, և որոյ արժանի կենսագրութիւնն մօտեցաւ ի ընդ պիտի գայ, Նորին Ազնուութեան մտասուն աշակերտներէն՝ Ամեն Տէր Մելքիսեդեկ Սրբազան Արքեպիսկոպոսին կողմանէ: Երկրորդապէս կը դասուի՝ Ալամդարեանցի վերատեսչական պաշտօնավարութիւնը:

Ալամդարեանց վարդապետ անշահախնդիր էր, եռանդուն և վեհանձն՝ իւր բոլոր գործոցը մէջ: Եւ սակայն՝ իբրեւ մարդ էակ, ունեցաւ իւր թերութիւններն, իւր տկարութիւններն: Ո՞վ է մարդ՝ որ ո՛չ մեղիցէ:

Եւ այս պատճառաւ՝ շատ վշտեր պատճառեց Ներսէս Աշտարակեցւոյն, յորմէ յանդիմանութիւններ կը կրէր

(1) Կարինեանց Յակոբ, որ յետ Տէր-Գաբրիէլ Պատկանեանցի՝ Տիխիսու Ներսիսեան դպրանոցին վերատեսուչ կարգուած է, ի մէջ այլոց, ունի հետեւեալ գրական գործունէութիւնը:

1846ին ի Թիֆլիս հրատարակեալ Կովկաս լրագրոյն խմբագիրներէն մին էր:

1861ին գրած և հրատարակած է՝ «Տեսութիւն Տասնամեայ գործողութեանց և հաշուոց հոգաբարձուաց Ներսիսեան Հայոց հոգեւոր Ուսումնարանին Տիխիսոյ ի 1851—1861 ամս»:

Աշխատակցութեամբ Կարինեանց Յակոբ վարժապետի, Պատկանեան Սերովբէ վարժապետին չորրորդ որդին՝ Միքայէլ Պատկանեան «Ինկվիզիայի» թարգմանութիւնը ըրած է, որ տպագրեալ է ի Տըիֆիս, 1853ին:

Ներսէս Աշտարակեցիէն մնացած տղաբան մը կար՝ այս տպարանը՝ Պօլսեցի ոսկերիչի մը յանձնուած էր, որ տղաւոր է ի մէջ ուրիշ գործոց, Կարինեանցի բազմաթիւ բանաստեղծական ոտանաւորները:

Միւրթարեան Արէլ Արքեպիսկոպոսէն գրուած և 1863ին ի Մոսկուա տպագրուած Անուշաւան վիպասանութեան դէմ հերքում մը գրած է:

միշտ: Եւ Ներսէս Երդ ամենէն աւելի գիտէր թէ՝ մարդը դատելու համար՝ մարդը սովորիլ պէտք է: Ուստի՝ կը պատմուի թէ, Ներսէս՝ Ալամդարեանցին՝ Եօթանկէսի Եօթն անգամ ներեց, զի կը գնահատէր անոր եռանդուն եկեղեցասիրութիւնը, անվիճելի արժանիքը և անձանձիր աշխատասիրութիւնը:

Եւ երբ Ներսէս Արքեպիսկոպոս կաթողիկոսանալով, 1845ին Պետերբուրգէն կ'ենէ ու ի Նոր-Նախիջևան կուգայ, կ'այցելէ Ալամդարեանց Յարութիւն վարդապետի գերեզմանը, և սաստիկ արտասուելով անոր վրայ, հառաչայն և դիմաւորաբար կ'ըսէ.

« Յարութիւն վարդապետ, թէպէտ դու ինձ շատ վշտացուցիր, բայց Աստուած քաղցր անէ դատաստանդ »:

Եւ ապա կը յաւելու.

« Եթէ Աստուած ինձ զբեղ բաշխած լինէր, ես քեզ իմ ձեռքը կը ձեռնադրէի կաթողիկոս, որ ետոյ իմ տեղս դու նստէիր »:

Եւ ես իմ խօսքս կը կնքեմ, պատշաճեցնելով հետեւեալ պարբերութիւնն Նոր-Նախիջևանի Ս. Խաչ մենաստանի տաճարին հովանւոյն տակ տաճարացեալ բազմարդիւն և մեծանուն վարդապետին համար, և կ'ըսեմ.

« Եթէ լացը մեռնողի համար սիրոյ նշան է, այն ժամանակ հանգուցեալ Ա.Ա.Մ.Գ.Ս.Ր.Ե.Ս.Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ համար մի միայն նորա՝ սրտասուն և հոգեսուն աշակերտները թո՛ղ չը լան, այլ և շատերը »:

~*~

Ը.

ՔԱՆԱԲԵՆԻ ԽԱՅԱՏՈՒՐԸ

Հայաբնակ Քանաքեռ բարձրադիրտակ գիւղը՝ Երեւանայ Խաներուն ամարանոցն է, և ունի՝ քաղաքէն իբր 5-7 մղոն հեռաւորութիւն:

Տեսարանն է ամէն կողմերովը հիանալի: Արեւմտեան կողմէն՝ խոխոջաձայն Հրազդանն, Չանգին կ'անցնի, որոյ արձագանգն ու նկարագիրն այնքան սրտառու է և այնքան բանաստեղծական նուրբ վրձիններով ներկայացուցած են մեր առաջին քնարերգուէն սկսեալ ամենայնեւ: Արեւելեան կողմէն չըլապատուած է պտղատու պարտէզներով և ողկոյզալից գեղեցիկ այգիներով: Գիւղին առջեւ կը պարզուի Երեւանեան դաշտավայրը՝ ազգի ազգի ծաղիկներով և հրաշալւան հրապոյրներով: Օդն առողջ, ջուրն անոյշ և պաղպաղուն է, որ

րոց համար իրաւամբ ժողովրդական առած դարձած է.

« Քանաքեռ՝ բարձր տեղ է,

« Զուրն՝ հիւանդին դեղ է »:

Սոյն պատմական գիւղ՝ բոլոր այս բնական գեղեցկութիւններով հանդերձ, իւր հին և նոր յիշատակներովն ալ ընդարձակ տեղ մը կը բռնէ Էջմիածնական ուղեւորաց սրտերուն մէջ:

Ո՞վ կանգ չառնուր Քանաքեռին առջեւ, որոյ մէջ Աղասիներ և Կարօներ, Մուսէներ և Վարդոններ ծնան, ծրեցան և անմահացան: Ո՞վ չսիրէր ողջն ինչ տալ այն յարկին՝ յորում ծնաւ մեծ Քանաքեռցին. չնչն՝ այն օդը՝ զոր շնչեց նոր գրականութեան նահապետը, ըմպել այն ջուրը, յորմէ քամաղդն գերմանական համալսարանականը կը խըմէր ու կը զովանար, և նստիլ այն մըլտադալար մարգագետիններուն վրայ, ուր Խաչիկն՝ իւր մանկութեան յիշատակներն անցուց, ճալալտի կամ ճնագուցտի խաղերն ու խցիկապոսէն սարքելով:

Քանաքեռցի Խաչատուրն ծնած կը կարծուի 1806ին, ազնուական ցեղէ մը, որոյ ազգաբանութեան մէջ Ապով և Վիլիս անուններն ժառանգական են, ու ոչ միայն Քանաքեռ գիւղի ամենէն ազնուական դասը կը կազմեն, այլ և այդ ցեղի պայազատներն տարածուած են ի Տիֆլիս, ի Շուշի և այլ ուրեք:

Քանաքեռցի Խաչատուրն՝ իւր տասնամեայ հասակէն, նուիրեց ինքզինքն ազգային դաստիարակութեան մեծ գործոյն, մասնաւոր պաշտպանութեամբ Արարատեան Մայր-Աթոռոյ:

Տասն և հինգ տարեկան հասակն թեւակոխած միջոցին, Խաչատուր յաճախ կը կարդայ՝ ըստ իւր ասութեան, Ղուկաս Վանանդեցւոյ, Սիմեոն Կաթողիկոսի, Միւրթար Աբբայի և այլոց վարժագրութիւնքը, ու կը ներշնչուի հոգեկան իղձերով:

Քանի մը տարիներ այսպէս մնաց Խաչատուր յէջմիածին, ծառայելով մերթ իբրեւ վանական մօնթիկ, փոքրաւոր և տիրացու, ապա թարգման՝ Ընդհանրական Կաթողիկոսարանին:

Պարսկական պատմութեան մասնագէտն էր նա: Ականատես գտնուած էր Երեւանայ մէջ տեղի ունեցած Պարսկա-ռուսական ճակատամարտին:

1824ին Էջմիածնայ Անտօն Արքեպիսկոպոսին հետ ի Հաղբատ, և անտի ի Տիֆլիս կուգայ, և կը յանձնուի Ղարաբաղցի Պողոս վարդապետին, որ 1820էն սկսեալ նոյն քաղաքի Տափի թաղի վանատան մէջ աշակերտներու դաս կուտար:

Խաչատուրի դասընկերներէն էր Ստեփաննոս Նազարեանց, որ կը կարդային առ ոտս Պօղոս վարդապետի՝ Չամչեան Բերականութիւն, Ագոնց Ճարտասանութիւն և Թեաւարոս:

Չենք գիտեր որոշ թէ՛ Խաչատուր խոցին մէջ որչափ կը պարապի դասառութեամբ, սակայն սա գիտեմք որ, յետոյ Ս. Նազարեանցին հետ Բանաբեւոցին՝ տեղւոյն Ներսիսեան դպրանոցը կը մտնէ և մասնաւոր ու հայրական պաշտպանութիւն կը վայելէ Ալամդարեանց Գարուսթիւն քահանայէն:

Խաչատուր՝ հասակաւոր և մտացի աշակերտ ու սուր յիշողութեան տէր էր: 1828ին կը մեկնի Տփլիսու Ներսիսեան վարժարանէն, քիչ շատ ուսմանց մէջ զարգացած, և դառնալով ի Մայր-Աթոռն երեք տարի իւր եպիսկոպոսին քով փոքրաւորութիւն կ'ընէ:

Անտոն սրբազանին վախճանէն յետոյ, Եփրեմ կաթողիկոսին քով կը մտնէ Խաչատուր, և կ'ստանայ Նորին Վեհափառութենէն՝ կիսասարկաւագութեան և աստիճանները, շարունակելով միանգամայն Մայր Աթոռոյն Բարտուղար-Թարգմանի փափուկ պաշտօնը:

1829ին կը լքէ այս կրկին պաշտօնները, համանգամայն թողնով հոգեւորականութեան սքեմն, որուն այնչափ խանդավառմանօք փարած էր, և ուղեկից ու թարգման կը լինի Ժամանակակից գերմանացի ուսումնական և հնարար ճանապարհորդաց, մասնաւորապէս՝ Վակնէրի, որոյ հետ Արարատ լեռը բարձրացաւ, և գիտնական Արիֆի հետ՝ որ մինչեւ ի Պայազլա ուղեւորեցաւ, և ամենուրեք ի մեծէ սկսեալ մինչև ցփռքուն, պատիւ, յարգանք, ցնորմանք իւր յոգնակամ պատրաստութիւնք վայելեց, ինչպէս որ Ներսէսէն կը գրէր Խաչատուր, 15 փետր. 1845 թ.՝ ուսականկիր նամակաւ՝ առ Ներսէս Ե. յաւերժայիշատակ կաթողիկոսն:

Ուսանողական հասակն անցուցած էր ուրարակիր-սարկաւագ Խաչատուր, երբ Տօրպատեան Համալսարանի ուսուցչապետ Պարթոտի շնորհիւ մտաւ Դօրպատու համալսարանը՝ իբրեւ ուսանող, ուր հինգ կամ վեց տարուան շրջան մը բոլորելէ յետոյ, 1835ին Սոյեցի Ստեփաննոս Նազարեանցի հետ(1) յաջողութեամբ աւարտեց իրեն ուսման ընթացքը, և երկուքն ի միասին իբրեւ մանկավարժ և մատենագիր դարձան հայրենիք, զիրենք նուիրելու համար Հայ մանկուոյն կրթութեանը և լուսաւորութեանը:

(1)Սա ևս նոյն համալսարանը մտած էր Ժակիւք Բժիշկ Սոլօմոն Արտեմիչ Տէր-Ղուկասեանի:

Մտեր Մագիստրոս Մսերեանց՝ Ժամանակակից ազգային գիտնական անձանց հետ նամակագրութիւններ ունէր: Նոյնը ունեցաւ նաեւ Խաչատուրին և Ստեփաննոսին հետ:

Տփլիսէն ի 40 Ապրիլ 1831 ամսաթուով՝ «Առ Խաչատուր դպիրն՝ որ ի Տէրպէ քաղաք» ուղղած թղթակցութենէն զատ, 1834ին ալ առ Խաչատուրն և Ստեփաննոս Նազարեանց գրած մի նամակէն՝ նշանակութեան արժանի հետեւեալ տողերը յառաջ կը բերեմ.

«Ձեզ մնայ այժմ, սիրելիք, ձեզ մնայ պատառել զվարագոյր խաւարաքօղ տգիտութեան, որով թշնամացեալ դժբեղակ բաղդին՝ առաքատեալ է ցայսօր զմիտս յոգունց ի Հայկազն մանկուոյ, և այլն:»

Պարտք կը համարիմ յիշել թէ, երբ յիշեալ զոյգ մը մասնագէտ համալսարանականքն իրենց երկիրը դարձան, յայնժամ ի Ռուսահայ չլային մասնագէտ մանկավարժներ՝ Առաքել Պահաթրեանցի, Սեդրակ Մանգինեանցի, Փիլիպպոս Վարդանեանցի և այլոց նման:

Խաչատուր՝ օղ և երկիր փոխելով, սիրտ և հոգի փոխողներէն չէր:

Քաջ հայկարան լինելէ զատ, գիտէր Ռուսերէն, Վրացերէն, Գերմաներէն, Գաղղիարէն, Թուրքերէն, Պարսկերէն, Իտալերէն և այլ լեզուներ: Ուստի փափաքեցաւ ի վերադարձին, նախ՝ ազգային վարժարանաց մէջ ծառայել, բայց ըստ որում գերմանական ուղղութեամբ պատրաստուած, կամ լաւ եւս, լուսեւրական ուղղութեան հակամէտ մի անձ նկատուած, Կարսեցի Յովնանէս ութերորդ կաթողիկոսէն ոչ նուազ հալածանքներ կրեց: Եւ սակայն Խաչատուր, անյողդողդ իւր տրամադրութեանց մէջ, վարեց ի Տփլիս և Ներսէան կրթական պաշտօններ ազգային և ուսական բարձրագոյն վարժարանաց մէջ՝ նիւթական ոչ-նախանձելի վարձատրութեամբ:

Խաչատուր՝ Տփլիսու Սոլոակ թաղին մէջ ալ գիշերօթիկ մասնաւոր վարժարան մը բացած էր, ուրկէ, ի մէջ այլոց, դուրս եկան Յովնէփ Ֆոնդոյեանց, որ իւր բազմերախտ վարժապետին 1841 ին գրած պատմական վեպն հրատարակեց իւր ծախիւք ի Տփլիս՝ 1858ին, — Գաբրիէլ Սատիսեան՝ որ երկասիրած է «Սէր, վիպասանութիւն հայ երեսնացը վրայ» տպ. 1881, և «Թաթախման երեկոն Թիֆլիսում» նկարագրական յօդուածը գրած. — Մ. Տէր Ազարեանց՝ որ գրած է Քանաքեռցի Խաչատուրին վրայ «Մէկ քանի խօսք» 1861 Կոնստնդի 7րդ թուոյն մէջ —, Գէորգ Աբիմեան, որոնք յետոյ՝ Տօրպատու համալսարանին մէջ իրենց ուսումը կատարեալագործեցին:

Սոյն մասնաւոր վարժարանն ալ չէ կրցած շարունակել Խաչատուր:

Պատճառը:

Պատճառը կը վերագրուի իրեն պաշտօնակից ուսուցչաց, որ ամէն տեսակ հալածանքներ յարուցած են Խաչատուրին դէմ՝ վհատեցնելու համար վարժապետութեան ասպարիզէն որ ըստ ինքեան փշոտ և ապերախտ է:

Մինչ այս և մինչ այն, և ահա Խաչատուր՝ օրին մէկը միտքը կը փոխէ, և 1838ին գրաբառ գիր մը ուղղելով առ Սինօդն՝ հոգեւոր կոչումէն պաշտօնապէս հրաժարիլը կը ծանուցանէ, առարկելով թէ՛

«Միթէ՛ որք աշխարհականքն են, չէն որդի սրբոյ Աթոռոյն, միթէ՛ այսու վիճակաւ ո՞չ կարեւոր միշտ ծառայել նմա:»

Եւ երկու ամիս յետոյ կատարուելով խնդիրը, կ'ամուսնանայ Գերմանացի օրիորդի մը հետ, յորմէ ունեցած է ընտիր զաւակներ, որոնցմէ Պ. Վարդան՝ երրեմն Գէորգեան Ճեմարանին մէջ Ռուսաց լեզուի և աշխարհագրութեան դասատուութիւն կ'ընէր, և ես անձամբ տեսի զինքը յՆերսէան՝ թեմական Իպրանոցի մէջ Ռուսերէն աշխարհագրութեան և պատմութեան դասախօսութեամբ ըզրաղած:

Խաչատուր՝ Աշտարակեցի Ներսէս Ե. ին թուոք՝ համակրողներէն լինելով, ու հայրենակիցն ալ համարուելով՝ փորձած է ընտանիքն և զաւակներն թողուլ, նորէն ուրանալ զաշխարհ, և վերստին սքեմ առնուլ, սա՛ համոզմամբ թէ՛ ինքը կուսակրօն կեանքով աւելի կրնայ բոլորանուէր ծառայել Ազգին և Եկեղեցւոյն, քան աշխարհականութեամբն:

Եւ սակայն Խաչատուրի սոյն խորհուրդն, կամ լաւ եւս՝ երազն դեռ չիրականացած, 1848ին, յանկարծ գիշերուան մը մէջ կը լսուի թէ՛ քամաղղէն Խաչատուր, օտարուհւոյ մը Կուպիտոնի սայրասուր նետերէն զոհուելով՝ ոչ ևս է:

Քանաքեռցին՝ իբրեւ գրական մարդ, իւր տեսակին մէջ անհամեմատ սուսեւելութիւններ ունի: Նորա ժողովրդական լեզուաւ գրած գլխաւոր երկասիրութիւնն — որ ի Տփլիս 1858ին հրատարակուեցաւ — կարդալու բաղդաւորուած չեմ, սակայն 1888ին Պ. Յովնանէս Նազարեանցի յօրինած և հրատարակած ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ անուն հաւաքածոյին մէջ կարդացած եմ Քանաքեռցի Խաչատուրին արձակաբանութիւններէն մի քանին, զոր օրինակ, Հրաձառակ գիւղը, Զանգի գետը, Եկեղեցի գնալը, Զմեռնային առաւօտը գիւղացու տանը, Գիւղացու ճիւղասիրութիւնը, Բուն բարեկեցականի ճաշ, Զուարճութիւն, և այլն:

Սոյն դասական յօդուածիկներն՝ գըրեթէ իրենց ամբողջութեամբ, Արարատեան գաւառաբարբառին ամենէն հարուստ հանքն կամ հաւաքածոյն կրնայ համարուիլ, յորմէ ամէն կերպիւ կրնան օգտուիլ գաւառական յոգնատեսակ լեզուաց բաղդատական հետազոտութեամբ զբաղող մտքերն:

Իսկ Բանաքեռցի Խաչատուրին ժողովրդական բանաստեղծութիւններէն 1840ին ի Տփլիսիս պարզ ոճով ոգած տանաւոր հետեւեալ գրուածն, իբրեւ գրական գոհար աստ կը զետեղեմ:

ԱՂԱՍԻԻ ՎԻՇՏԸ

Սար ու ձոր ընկած մէկ չոր թփի տակին,
Գետինին նայելով մնացել եմ նըստած:
Ձեռս ծոցումբս, գլուխս մէկ լուռ քարի
Տըւած՝ լալիս եմ օրըս խաւարած:

Ամպերն առաջիս, սարերն ետեւիս,
Քեզ մոտիկ տալով, այժմ քաղցր երգիւս:
Աղի արցունքով էրուած, խորոված,
Երեսիդ նայեմ՝ մընամ քարացած:

Ծընօղք, ազգականք հեռու ինձանից,
Լուսնին նայելով, ձեր սէրն յիշելով,
Եարար ե՞րբ կըլի, որ ես ձեզանից,
Իմ կարօտս առնեմ՝ ձեզ ջան ասելով:

Աչքըս ծով դարձաւ ճամբին նայելով,
Մէկ զուշ որ գլխիս պըտիտ է գալիս,
Թէ ե՞րբ մէկ խաբար կ'հասնի ինձ բարով,
Հոգոց հանելով ասում եմ լալիս:

Նազըս իմ, Նազըս, աննըման Նազըս,
Սիրտս խորովի անուռնդ յիշելով:
Նազըս իմ, Նազըս, հրաշալի Նազըս,
Աղասին քեզ տայ իր յետին բարով:

Սարերի դօշին, ձորերի միջին,
Վայ գլխին տալով քու խեղճ Աղասին,
Երեսիդ գրկուած, քու սիրով մաշուած՝
Տատրակի նըման փշի վերայ նըստած:

Նազըս իմ, Նազըս, մէկ շունչս է մնացել,
Ոսկերքս քրքրվել, աչքերս խաւարել,
Թող մէկ շունչդ առնեմ, յետոյ հող մտնեմ,
Դժոխքն էլ տանեն՝ ես հանգիստ կ'ընեմ:

Քեզ եմ մընում, քեզ, քու ջանին մեռնիմ:
Հող ու գերեզման ես վըրես ունեմ,
Քանց իմ առը մարմին էլ ի՞նչ գերեզման
Ինձի պէտք կուգայ, երեսիդ ղուրբան:

Պոլսոյ Մեղուին և ի Պետերբուրգ
հրատարակեալ երգարանի մը մէջ՝ տըպուած է վերոյիշեալ Աղասիի երգը կամ վիշտը:

Ասոնցմէ գատ ունի կիսատիպ՝ Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորավարձից: — Իզմիրի Արշալոյս Արարատեան լրագրոյն 160 թուոյն մէջ տպուած երևանու գաւառաբարբառով փոքրիկ պատմութիւն մը: — Տփլիսու Մեղուի 1858 տարւոյ 2րդ համարին մէջ տպուած

ոտանաւորը: — Պատանեկութեան և երիտասարդութեան օրերուն յիշատակագիրն (գերմաներէն լեզուաւ):

Ռուսերէն լեզուաւ քանի մը յօդուածներ ունի կովկաս լրագրոյն մէջ:

Աշխարհաբար երգերէն զատ, ունի բազմաթիւ անտիպ միացած գրաբառ գրութիւններ:

Ունի նաև աշխարհաբառ չարագրութիւններ՝ Ագնես. — Ֆեօդորայ կամ որդիական սէր. — Օվսանա պատմութիւն. — Պարսպ վախտի խողալիք, պարապ մարդու տանու միտք. եւ այլ երկեր:

Չմոռնանք յիշել թէ Բանաքեռցին՝ քաղաքական աստիճանաւոր ալ էր: մայեօրութեամբ թէ Սովետնիկութեան աստիճանն ունէր:

Բանաքեռի փառքը յաւելցնող ծընունդ՝ միայն այս Խաչատուրը չէ՝:

Անցեալ դարուն մէջ Ազգին ընծայած է Բանաքեռ՝ Ջաքարիա Սարկաւազ պատմագիր կաղ անուանեալ, որ ծառայած է Դաւիթ Ե., Մելքիսեդեկ Գառնեցի, Գրիգոր Ժ.Պ. Նդեստցի, Սահակ Դ. Գառնեցի, Մովսէս Գ. Սիւնեցի, Փիլիպպոս Աղբակեցի, Յակոբ Դ. Ջուղայեցի, Նդիազար Այնթապցի, ու Նահապետ Եդեսացի կաթողիկոսաց:

Ջաքարիա՝ իւր պատմութեան Բ. մասին մէջ՝ ահաւոր երկրաշարժի նկարագիրն ընելով, կը յայտնէ թէ՝ միայն Բանաքեռի մէջ 1228 մեռեալք զոհուած են այդ սոսկալի արկածին, որ մեծամեծ հաստատութիւններ, վանօրայք ու եկեղեցիք հողու հաւասար ծածկուած է, սասանելով Աղջոց վանուց եկեղեցիները, Ալքիվանք, Հաւուցքառ, Տրդատակերտ, Խորվիրապ, Զրվեճ և Ծակվանք, ինչպէս նաև Երեւանայ երեք եկեղեցիներն ու Նորադաւիթ, Նորագիւղ, Նորք և Զորագիւղ:

Բանաքեռ՝ ընծայած է այլ և երուսաղիմայ Առաքելական Աթոռոյն Յովակիմ անունով Պատրիարք մը 1775 թին:

Բանաքեռ երկու եկեղեցի ունի՝ Ս. Գէորգ և Ս. Յակոբ:

Առաջնոյն բակին մէջ է Աղասիի գերեզմանը:

Ո՛չ մարմնամաշ տարեգիրն և ո՛չ հոգեմաշ կենսագիրն կարող են գոհացնել այժմեան ընթերցողներն, եթէ քիչ մը տեղական գիտելիք ու հին յիշատակներ կենսագրեալ գէմբերուն հետ չներկայացնեմք մերթ ընդ մերթ:

Ա. Յ. ԱՅՎԱԶՆԱՆ

ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒ ՄՐՑԱՆԱԿԻ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Յօդ. 1. — Որոշմամբ Ազգային կեդրոնական վարչութեան, Պատրիարքարանի Սնտուկէն վճարելի տարեկան 50 ոսկոյ գումար մը սահմանուած ու կեդրոնական Ուսումնական Խորհրդոյ տրամադրութեան տակ դրուած է իբրեւ մրցանակ գործածուելու համար լաւագոյն դասագրոց հեղինակաց ի քաջալեր եւ ի դիւրութիւն նոցա երկոց տպագրութեան:

Յօդ. 2. — կեդրոնական Ուսումնական Խորհուրդը ի՛նք անձամբ կամ այլ ձեռնհաս քննչաց միջոցաւ կը կատարէ ներկայացեալ դասագրոց քննութիւնը եւ կ'որոշէ մրցանակի արժանի գործերը:

Յօդ. 3. — Երկոց արժանեաց ու կարեւորութեան համեմատ կամ 50 ոսկոյ գումարն ամբողջապէս կը տրուի մէկ հեղինակի եւ կամ կը բաժնուի մի քանի հեղինակաց մէջ: Սոյն գումարը կրնայ ամբողջապէս կամ մասամբ չգործածուիլ եթէ տարի ըլլայ ուր վարձատրութեան արժանի գործեր չներկայացուին, կամ մասնակի վարձատրութիւն մը միայն բաւական համարուի: Այս պարագային մէջ՝ չգործածուած կամ յաւելցած գումարը կը մնայ կեդրոնական Ուսումնական Խորհրդոյ տրամադրութեան տակ, որ կրնայ գործածել զայն ուրիշ տարիներ մրցանակաց թիւը յաւելցնելու:

Յօդ. 4. — Ուսումնական Խորհուրդը մրցանակաց բաշխումը կը կատարէ հրապարակական նստի մը մէջ, ուր կը հրաւիրուին Ս. Պատրիարք Հայրն, վարչական կրկին ժողովոց ղեկանք, որպէս եւ անուանի ուսուցիչք եւ գրագէտք: Կ. Պոլսոյ մէջ գտնուող մրցանակառու հեղինակք կը հրաւիրուին անձամբ սոյն նստին մէջ ստանալ իրենց պարգեւը:

Յօդ. 5. — Վարձատրեալ հեղինակք պարտաւոր են կեդր. Ուսումնական Խորհրդոյ կողմէ նշանակուած թուով իրենց գործոց տպագրեալ օրինակներէն յանձնել նոյն Խորհրդոյ, որ զայնս ձրիաբար կը բաշխէ Կ. Պոլսոյ և գաւառաց ազգային վարժարանաց աղքատիկ ուսանողաց:

Յօդ. 6. — Մրցման մասնակցիլ փափաքող հեղինակք իրենց գործերը տպագրութիւն յառաջ, ձեռագիր, պարտին ներկայացնել կեդր. Ուսումն. Խորհրդոյ: Արդէն տպագրեալ գործեր նորոգ տըպագրութեան մ'առթիւ միայն կրնան ներկայանալ ի մասնակցութիւն մրցման:

Յօդ. 7. — Մրցման ներկայանալի գործերը պէտք է որ սեպտեմբեր 1էն մինչ ի փետրուար 1 յղուին կեդր. Ուսումնական Խորհրդոյ ղեկանին. սոյն պայմանաժամուն լրմանէն յետոյ ներկայացուած

գործոց քննութիւնը կը յետաձգէր յաջորդ տարւոյն: Մրցանակաբաշխումն ամէն տարի անորիւ ամսոյ առաջին եօթնեկին մէջ տեղի կ'ունենայ:

Յօդ. 8.—Անհրաժեշտ է որ ներկայացեալ գործերը պատրաստուած ըլլան կեդրոնական Ուսումնական խորհրդոյ կողմանէ հրատարակեալ ուսմանց ծրագրոց համաձայն եղանակաւ: Սոյն խորհրդը կարող է, երբ որ ուզէ ու պէտք տեսնէ, սահմանափակել մրցումը ուսուցման այս կամ այն առարկայի դասագրոց մէջ, և կամ կանխաւ մասնաւոր յատկազօծեր առաջարկելով մրցման մասնակցութեան համար ի քննութիւն ընդունիլ միայն նոցա համաձայնաբար յօրինեալ գործերն:

ՈՒՂՆԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Ի ԳԻՒՂՈՐԱՅՍ ԵԱԼՈՎԱՅԻ

Անցեալ չաբաթ, 20 յունիս, փոքրիկ ուղեւորութիւն մ'ունեցանք ի գիւղորայս Եալովայի և Գարա-Մուսալի. մեր ունեցած տպաւորութիւններն գրել պարտք կը համարիմք միայնիկ մէջ:

Ժամը 1 1/2 ին մայրաքաղաքէս մեկնեցանք չոգենաւով և հետզհետէ հանգիստով ի Եալովա և Տարքաւ, որոնք սիրուն տեսարան մը ունին ծովու վերայ: Հասանք ի Գարա-Մուսալ, ուրկէ ձիով ուղղուեցանք իբր 3 1/2 ժամու մէջ ի Եալաք-Տէրէ գիւղ: Ուղեւորութիւնը խիստ հաճոյալի եղաւ արդարեւ, վասն զի Գարա-Մուսալէն ի Եալաք Տէրէ, ամառուան զով օդի մը, արեգական վերջալուսին և լուսնի ծագմանն մօտիկ, կ'անցնէինք սիրուն դաշտերէ, բլուրներէ և ձորերէ. մի կողմէն կը լսուէր ճճինքու բղղուն, միւս կողմէն վազուն ջրերու կարկաշն ու գորտերու կրկնոցը: 2 1/2 ժամու ընթացքէ մը յետոյ՝ տեսանք մեծ անտառ մը որուն համար ըսին թէ կը կոչուին «Հին գիւղ»: Եալաք Տէրէցիք հոս կը բնակին եղեր առաջ, բայց ձմռան խստութեան պատճառաւ յետոյ փոխադրուել են ձորին մէջ (Եալաք-Տէրէ), որուն օդը չէ այնքան լաւ որքան հին գիւղն, բայց մօտերն ունի լաւ ջուր և օգտուն վայրեր:

Եալաք-Տէրէ կը կարծուի իբր 250 տարուան գիւղ մը և այսօր ունի 140 տուն 650 բնակչօք, մէկ եկեղեցի Ս. Հրեշտակապետ անուամբ և մէկ վարժարան երկսեռ: Եկեղեցին ունի 2 քահանայ: Գիւղը հիւրընկալուեցանք Տէր Արսէնի տունը:

Վարժարանն ունի 50 աշակերտ, մի քանի հատ աշակերտուհի, որովհետեւ

ամառը ծնողք իւրեանց զաւակները տունը կը թողուն ի պահպանութիւն, և իրենք արտը կ'երթան: 2 մեռը աշակերտաց թիւը կը բարձրանայ եղեր 100—120ի: Տարեկան ծախսն է 1500 դրուշ: Վարժարանին վիճակն է շատ անգոհացուցիչ՝ գիւղացւոյն անհոգութեան պատճառաւ:

Եկեղեցին 50 տարի առաջ ի հիմանց կառուցուել է վերստին: Հին եկեղեցւոյ մասին՝ քարի մը վրայ գտանք հետեւեալ յիշատակարանն. «Շնեցաւ ձեռնիտ գիւղի Ս. եկեղեցին 1172 թուին Հայոց, քահանայից և ժողովրդեան ջանիւք»: Գտանք եկեղեցւոյն մէջ մի քանի հին պատկերներ, այլ ամենէ սիրուն և հինն Յարութեան պատկերն էր գունաւոր, որու ներքեւ գրուած է. «Յիշատակ է պատկերս Սաղըր Վարդանի որդի պատմաճի Մանուկի. ՌՄԺԵ թվին (1217):»

Յաջորդ օրը գնացինք ի Մերտեկեօզ որ նոյնպէս 250 տարուան գիւղ մը կը կարծուի և կ'ըսուի թէ բնակիչք Մերտիցէն գաղթած են, և այս պատճառաւ գիւղը կոչուել է Մերտեկեօզ: Ունի 950 բնակիչ, եկեղեցի, վարժարան և երկու քահանայ: Վարժարանը մի քիչ բարեկարգ է բաղդադմամբ Եալաքտէրէի վարժարանին: Մօտերը կան Հասան աղբիւրն, ծառերով զարդարուն և պաղ և վազուն ջրերով Զօքէլիմ անուն տեղ մը: Մի քիչ անդին տեսանք ջաղացք մը որ կը դառնար ջրով: Մի քանի սիրուն ժամեր անդ անցունելէ վերջ՝ դարձանք ի Եալաք-տէրէ: Եալաք-տէրեցիք և Մէրտէկէօզցիք աշխատասէր են և հիւրասէր: Իրենց ջանքը չխնայեցին, մասնաւորաբար առաջինք, զմեզ հանգիստ ընելու համար:

Նրեքաթի առաւօտ կանուխ բաժնուեցանք Եալաք-Տէրէէն և 1—2 ժամ ճամբորդութիւն մը ընելէ վերջ հասանք ի Գըզ-տեքվեկն որ 300ի մօտ տամբք և 1000 բնակչօք գիւղ մ'է ամբողջ Յոյն. կը խօսին տաճկերէնով և հայերէնով խառն յունարէն: Կանայք տարօրինակ հագուստներ կը հագնին, այնքան տարօրինակ որ կ'արժէ Զիկաքօի արուեստահանդէսն ուղարկել զայնս: Յիշատակութեան արժանի չէնք է մեծ խան մը, որ շատ հին չէնք մ'է և որ այժմ իբր ակոռ կը գործածուի: Գիւղը կը կարծուի իբր 500 տարուան: Գըզ-Տէրվէնտէն կը մեկնիմք դէպ ի Քերամք գիւղ: Ճամբան շատ սիրուն է. խիտ անտառաց և ծառերու մէջէն յամրաքայլ կ'ընթանամք, մեր չորս կողմէն առուակներ կը հոսին, ձորեր մեր ոտից ներքև և լեռներ մեր գլխուն վրայ սիրուն տեսարան մը կը յօրինէին: Այլը

զօգ անուն տեղն ուր ջուր կար, նստանք ու ճաշեցինք. անկից կը տեսնէինք Նիկիոյ լիճը: շարունակելով մեր ուղին, 3 ժամէն հասանք ի Քերամք, ուր ծնած է Ալըգեան Տ. Խորէն Ս. Պատրիարքը:

Քերամէթ ունի 160 տուն 1000 բնակչօք, մէկ եկեղեցի և մէկ դպրոց 85 աշակերտով: տարեկան ծախք 55 ոսկի: Աղջկանց վարժարան չկայ, որով դատապարտեալ են խեղճ աղջիկներն անկիրթ և անուս մեծնալ:

Եկեղեցին մէկ քահանայ ունի միայն և այն ալ ծերունի ըլլալով, չկրնար ժողովուրդը գոհացնել կրօնական տեսակէտով: Քանիցս դիմում եղեր է ուր որ անկ է, բայց չէ լսուել իրենց աղաչանքն: Գիւղացին ցաւօք կ'ըսէր թէ Ս Զատիկէն ի վեր Պատարագ չէ տեսեր:

Գացինք Ըլքաւ անուն տաք հանքային ջուրն ուր սիրուն տեսարան մը կը պարզուէր մեր աչաց առջեւ: Մի կողմէ Նիկիոյ լիճը, միւս կողմէ մեր դիմացը կ'երեւէին Ողիմպոսի լեռներն ձիւնապատ: Ի՞նչ սիրուն տեսարան էր ձիւն տեսնել այդ տօթին...

Քերամէթի օդն այնքան առողջարար չէ, բաղդադմամբ ուրիշ գիւղերու: (Շարունակելի) ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի առաւօտ Սպարտ-Լիւ-Համիտ ողորմած կայսեր կողմանէ Ազգ. Ս. փրկչեան Հիւանդանոցի յատկացեալ օրական հացին ու մսին կրկնապատիկ կը շնորհուելուն առթիւ, Ս. Պատրիարք Հայրն կիւրակէ առաւօտ հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Ս. Փրկչի մատրան մէջ: Ներկայ էին եպիսկոպոսը, վարդապետը, քահանայք, ժողովականք և ժողովրդեան ամէն դասերէ ստուար բազմութիւն: Ս. Պատարագի արարողութենէն յետոյ, մասնաւորապէս պաշտօն կատարուեցաւ վեհ. կայսեր արեւշատութեան համար:

Կրօնական այս հանդէսէն յետոյ, Հիւանդանոցին մէկ ընդարձակ սրահին մէջ 100 հոգւոյ փառաւոր սեղան մը դրուեցաւ: Ուղերձներ արտասանուեցան թուելով այն շնորհքներ շորս վայելած է միշտ ու կը վայելէ հաւատարիմ Հայ Ազգն Օսմ. փառապանծ գահէն. յոռնկայս և եւանդագին ծափահարութեամբ բաժակներ պարպուեցան վասն երկարութեան անգին կենած վեհ. Սուլթանին:

Ճաշէն յետոյ, Ս. Պատրիարք Հայրը և Գաղ. Ժողովոյ Ատենապետ Վսեմ. Մաքսուտ Սիմոն պէ. ի կայս. պալատ գնացին, համօրէն Ազգին շնորհապարտ զգացմանց և ամբաւ երախտագիտութեան թարգման եղող Ուղերձ մը մատուցանելու համար յորտ կայս. գահոյից:

— Ս. Պատրիարք Հայրն յատուկ գրութեամբ մը, ուղղեալ առ նորընտիր Վեհ. Հայրապետն ամենայն Հայոց, ի վնս Ս. Երուսաղէմայ, շնորհաւորեց նորա ընտրութեան վաւերացումն և կար ու կարողութիւն մաղթեց իւր Հայրապետական բարձր պաշտօնին մէջ: Նամակ մ'ես ուղղելով Ս. Երուսաղէմայ Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին, ի պաշտօնէ ծանոյց Վեհափառ Տ. Տ. Մկրտիչ Ա. Ս. Կաթողիկոսի ընտրութեան վաւերացումը: Չորեքշաբթի զրկուեցան Ս. Պատրիարքին ու Վարչական Ժողովոց շնորհաւորական նամակներն առ Վեհ. Տ. Մկրտիչ Կաթողիկոսն: Սինօգէն տակաւին ծանուցուած չէ ի Պատրիարքարան՝ Նորին Վեհափառութեան ընտրութեան վաւերացումը:

— Ըստ յանձնարարութեան Ազգ. Վարչութեան, Պատրիարքարանի դիւանատունը ձեռնարկած է պատրաստել տեղեկագիր մը որուն մէջ մանրամասնօրէն նկարագրուած պիտի լինին թէ ի՞նչ կերպով ընդունուեցան հոգեւոյս Մատթէոս և Գէորգ Կաթողիկոսներուն համար Ռուսիայէն եկող հրաւիրակներն, ի՞նչ ընդունելութիւն եղաւ Գէորգ Կաթողիկոսին որ Պրուսայէն եկաւ, ի՞նչ արարողութիւններ կատարուեցան մայրաքաղաքիս մէջ երկու Կաթողիկոսաց համար, թէ ի՞նչ հանդէսով մեկնեցան Կ. Պոլսէն:

Վերոյիշեալ տեղեկագիրը պիտի մատուցուի վարչութեան, որ զայն հիմ բռնելով, ըստ այնմ պիտի պատրաստէ Վեհափառ Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի ընդունելութեան ծրագիրը:

— Չարմանօք կարդացինք «Արեւելք» ի մէջ թէ, նորընտիր Հայրապետին ընդ առաջ երթալու համար՝ Ս. Սինօգին կողմանէ եկեղեցական հրաւիրակ կարգուած է Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան: Սա այն եպիսկոպոսն է որ իւր կաթողիկոսական ընտրելիութիւնը յաջողցնելու

համար, երկու եպիսկոպոսներ հեռացնել տուաւ: Արեւելք կը լսէ նաեւ թէ Ռուս կառավարութեան կողմանէ ևս հրաւիրակ պիտի նշանակուի զօրավար Քիչմիշեանց: Սեդրակեան Սըրբազանին պիտի ուղեկցի եղբր վարդապետ մը, իսկ Քիչմիշեանց զօրավարին՝ թիկնապահ մը:

— Էջմիածնայ Գէորգեան ճեմարանը, ինչպէս գրած եմք արդէն, խեղճ ու անբարեկարգ վիճակի մէջ է ժամանակէ մը ի վեր: Գրած էինք արդէն՝ Սինօգական Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոսի նախաձեռնութեամբ՝ ճեմարանին ամենէն հմուտ և ձեռնհաս պաշտօնէից, Սեդրակ Մանգինեանցի, կարապետ Կոստանեանցի և այլոց հեռացուցուիլ: «Նոր-Դար» ի մէջ կ'իմանամք թէ ճեմարանի կարող ուսուցչաց հեռացումն գործը կը շարունակուի: Այսպէս, այս օրերս հեռացուցուած է նաեւ Պ. Յովհաննէս Խաչունեանց, վասն զի սա «Նոր-Դար» ի մէջ համարձակած էր քննադատել Բէգ-Նազարեանց Սարգիս քահանայի հրատարակած «Կրօնի Դասագիրք»-ը: Գրած եմք արդէն որ այս գիրքը Ռուսերէնէ թարգմանուած և Սինօգական Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի հրամանով տպագրուած էր իբրեւ «Համաձայն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ դաւանութեան»: Էջմիածնէն կը գրեն թէ Սինօգը, որուն մէջ մեծ դեր կը խաղայ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան, ցրուեր է նաեւ տպարանական ժողովը, որով և տպարանը այժմ ենթարկուած է անտէր ու անկերպարան վիճակի: Տպարանական ժողովոյ նախագահ Գեր. Դաւթեան Սըրբազան նոր Կաթողիկոսին Էջմիածին ժամանելուն կ'սպասէ եղբր, այս զեղծմանց և ապօրէն գործողութեանց դէմ բողոքելու համար:

— Ս. Էջմիածնայ մէջ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան կ'աշխատի եղբր որ վրաստանի և Իմէրէթի Հայ վարժարանաց համար Եղիշէ քահանայ Գեղամեանի տեղ թեմական Տեսուչ նշանակուի Սարգիս քահանայ Բէգ-Նազարեանց:

— «Նոր-Դար» ի մէջ կը կարդամք թէ, Սինօգի նորահաստատ անդամ Վանեցի Գրիգորիոս եպիսկոպոս Սղուանեան, որ տարւոյս սկիզբը նշանակուեցաւ ընդհանուր վերատե-

սուչ Էջմիածնայ վանուց բոլոր ներքին և արտաքին կալուածոց, ծախսարարապետ և վերատեսուչ հին ծախքերուն, որ երկու անգամ թիֆլիս գնաց ձմեռը՝ Յունվար 6ին աղէտը քննելու և Մարտ 22ի ընտրութեանը նախագահելու, որ իւր եռանդուն գործունէութեան համար հանգուցեալ Տ. Տ. Մակարայ 300 ռուպլի արժողութեամբ մուշտակն ընծայ ստացաւ Մայիսի սկիզբը, — այժմ զրկուեր է ընդհանուր տեսչութեան պաշտօնէն և պիտի արձակուի եղբր նաեւ վանական կառավարութեան նախանգամի պաշտօնէն: Սըրբազանք դեռ Սինօգի անդամ է:

— Սինօգական Արիստակէս Սեդրակեան եպիսկոպոսի բարեկամ բըժիշկ Չարդարեան, քուրբայի դէմ 17 երեսէ բաղկացեալ տետրակ մը գրելով, վանքէն ստացեր է 300 ռուպլի:

— Էջմիածնայ Սինօգը որոշեր է երեանայ Առաջնորդ Գառնակերեան Գրիգորիոս եպիսկոպոսի տեղ պաշտօնի կոչել Լևոն Խոչայեան անուն երիտասարդ անփորձ արեղայ մը:

— Ծանուցինք արդէն Ռաֆայէլ Պատկանեանի մահը: Բանաստեղծը օգոստոս 22ին մեռեր է ո՛չ թէ ի Ս. Բեդրսպուրկ, այլ ի Նոր-Նախիջևան: Պատկանեան թաղուեր է քաղաքէն 7 մղոն հեռու գտնուող Ս. Խաչ Վանքի բակին մէջ: Յուդարկաւորութեան օրը քաղաքագլուխ Պ. Մինաս Պալապանեան հանգանակութիւն բանալով բանաստեղծին ընտանեաց ի՛նչպատ, 1000 ռուպլի հաւաքեր է: Պատկանեան Հիմնադիրն ու Տեսուչն էր Նոր-Նախիջևանու Արհեստագիտական վարժարանին:

— Ատրպատականի առաջնորդ Մխիթարեան Տ. Ստեփաննոս եպիսկոպոս (Արապօ մականունանեալ) մեռեր է քուրբայէ, վասն զի մինչ Դաւթի հարուստ ընտանիքները քաղաքէն դուրս օգաւէտ տեղեր հեռացած էին և զինքն ալ իրենց մօտ կը հրաւիրէին, Ն. Սըրբազանութիւնը չուզեց իւր ժողովրդեան աղքատիկ դասակարգէն բաժնուիլ, մընաց անոնց մէջ՝ կարեւոր հոգածութիւնըն ընձեռելու համար անոնց, մինչեւ որ օգոստոս 1ին ինքն ալ այդ ախտէն վարակուելով մեռաւ: Թաղուեր է Նկեղեցւոյն գաւիթը: Առաջնորդարանը փակուեր ու կնքուեր է:

— Վրաստանի և Իմէրէթի թեմի բոլոր քաղաքաց ու գիւղօրէից եկեղեցեաց մէջ հետզհետէ հոգեհանգիստ կը կատարուի հանգուցեալ առաջնորդ Մամբրէ եպիսկոպոս Սանասարեանի համար:

— Մէկ երկու լրագիրք ծանուցին թէ Թիֆլիսի հանգուցեալ պռաճնորդ Սանասարեանց Մամբրէ կայսկոպոսի մարմինը ամփոփուեցաւ Կոջոր գիւղի եկեղեցւոյն գաւիթը։ Սխալ է այս լուր։ Թէև ի սկզբան Սեդրակեան Արխատակէս կայսկոպոս հեռագրաւ հրաման արձակեց, որպէս զի Կոջորի եկեղեցւոյն գաւիթը թաղուի, բայց ի վերջոյ՝ ժողովրդին պահանջմամբ՝ փոխադրուեցաւ մարմինն ի Թիֆլիս և ամփոփուեցաւ Վանքի Մայր Եկեղեցւոյն գաւիթը, իւր անուանակցին՝ ազգային բարերար Մկրտիչ Սանասարեանցի քովիկը։

— Վարչաւիոյ համալսարանի բժշկական մասի բրոֆէսոր Պ. Վաղարոս Թուսան Կովկաս գնացեր է հետախուռ ուսումնասիրելու համար։

— Այլազովոյի մօտերս աւարտեր է մի մեծ նկարի շինութիւնը, «Ապագայ թէոգոսիան»։ Հռչակաւոր Հայագգի նկարիչը Սեպտեմբերին պիտի ուղևորի ի Զիգակո։

— Մոսկուայի Լազարեան ձեմարանի Տնօրէն Պ. Բանանեան հանդերձ ընտանեօք վաղը մայրաքաղաքէս կը մեկնի յԱրմաշ։

— Տ. Եզրաս վարդապետ Մաքրի գիւղի քարոզիչ կարգեցաւ։

— Գաւառ գիւղի Թաղ խորհուրդը 500 ոսկւոյ փոխառութիւն մը պիտի ընէ թաղին ազգայիններէն, գիւղին նոր գերեզմանատունը շրջապատելու համար։

— Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տրդատ վարդ. Պալեան, վաղն առաւօտ Պէտրիք տէրէի Եկեղեցւոյն մէջ Ս. Պատարագ պիտի մատուցանէ, ի յիշատակ հոգւոյ համօրէն ննջեցելոց Էստեան գերդաստանի։

— Գեր. Արխատակէս Մ. Վ. Վանքեան պիտի պատարագէ վաղը Եջնի Գաբուի Եկեղեցւոյն մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանիոյ կայսրը Համպուրկ կը գլուխուր։

— Բարիզոյ Բասթիօրեան հաստատութեան մէջ, հետախուռի դէմ Տոքթ. Հաֆթիւնի և Թամամեանցի ձեռօք կատարուած պատուաստէն ընդունելու է նաև Նիւ-Եսքը Հերայտի Պէրլիի թըղթակիցը Պ. Սթէնհոֆ որ Համպուրկ գացած է՝ հետախուռուց հետ ժամանակ անցնելով այդ պատուաստը փորձելու համար։

— Յունաստանի կառավարութիւնը կը ջանայ եղբի 11 1/2 միլիոն անգլ. ոսկւոյ փոխառութիւն մը կնքել իւր երբեք ունեւորուց և առժամայ փոխառութեանց թուղթերը ընջելու համար։

— Վիեննայի մէջ երիտասարդ մը վաճառատուն մը մտնելով, պաշտօնեայ մը վիրաւորեր և 50 հատ ոսկի շղթայ գողնալով փախեր է։

— Պ. Կլաւսթրոն անցեալ շաբթու Կալէսի նահանգն երթալով, Մանչի ծովուն տակէն ներքնուղի մը շինելու խորհուրդն յղացող Սըր Ս. Վոթթինի շինած նոր երկաթուղւոյն բացմանը ներկայ գտնուեցաւ։

— Անգլիոյ Բեթերսպուրկի դեսպանը Լորտ Ռոզպէրիէն մանրամասն հրահանգներ ընդունած է՝ Բամբիի խնդրոյն առթիւ Ռուս կառավարութեան հետ համաձայնութիւն մը գոյացնելու համար։ Միւս կողմանէ, Ռուսիա նոր դօրք կը շրջէ Բամբիի մէջ գտնուող Եանօֆ գլխապետին՝ հոն աւելի լաւ տեղաւորուելու և ձմերելու համար։

— Պէլճիքայի և Ֆրանսայի միջև փոքր խնդիր մը ծագած է։ Ֆրանսայի հանքերուն մէջ աշխատող գիւղացի գործաւորք գէշ աշխույ կը նային եղբի Պէլճիքայէն աշխատելու համար հոն գացող գործաւորաց, մինչդեռ այս վերջինք շատ լաւ ընդունելութիւն կ'ընեն Ֆրանսայէն եկողներուն։ Այս խնդիր որ բաւական անկարգութեանց տեղի կուտայ, պիտի կարգադրուի երկու կառավարութեանց միջև։

— Ճիզուիքք իրենց մեծաւորն ընտրելու համար չկարենալով և ոչ մի երկրի մէջ գումարուիլ, Մօնաքոյի փոքրիկ տէրութեան մէջ պիտի կատարեն այդ ընտրութիւնը։

— Համպուրկը, որ ինքնօրէն կառավարութիւն ունի, հետախուռի դէմ կարելի եղած միջոցներով չկարենալ պաշտպանուելուն համար՝ Բրուսիոյ հետ միացնելու խօսքեր կան։

— Վիլհելմ Ա. Կայսեր ձիաւոր մէկ արձանին բացումը կատարուեցաւ անցեալ շաբթու ի Մէջ (Ալգաս-Լօրէն)։

— Լուքսոյի (Ֆրանսա) մէջ գտնուող Ս. Աստուածածին ուխտատեղւոյ քարայրին աւազանը հաւատքով մոնողներն ալ կ'առողջանան եղբի։ Անցեալ շաբթու վերջին աստիճանի թոքախտ ունեցող կին մը առողջացեր է։

— Ֆրանսական բանակին ռազմափորձերն աւարտեցան։

— Իրլանտայի մասին պատժական օրինաց բոլոր բացառիկ տրամադրութիւնք ընջուեցան։

— Իտալիոյ թագաւորն ու թագուհին սեպտ. 3ին մեկնեցին ձէնովայէն։ Զիրենք ողջունելու գացող օտար նաւատորմերն ալ յաջորդաբար մեկնեցին։ Մասնաւոր համակրական ցոյցեր եղբի են Ֆրանսացի նաւազին։

— Նեղոս գետը բարձրանալ սկսեց է և ողողումներէ կը վախցուի։

— Մօնաքոյի մէջ 26 տարեկան ամերիկացի աղջիկ մը իւր ամբողջ հարստութիւնը՝ 50.000 անգլ. ոսկի՝ խաղի մէջ կորսնցնելուն համար անձնասպան եղաւ։

— Լանկի (Հոլանտա) գերմանական և սպանիական դեսպանատանց քարտուղարները ուրիշ չորս դեսպանատանց քարտուղարներու վկայութեամբ աւորձանակով մենամարտեր և սպանիացին ծանրապէս վիրաւորուեր է։ Պատճառը կին մ'է կ'ըսուի։

— Պուլկար լրագիրք մեծ գովեստիւք կը հռչակեն Սելանիկէն փոքր-Ասիա տարագրուած երկու Պուլկարներու վեհ։ Սուլթանէն ներման արժանանալը։

— Պրայքընի մէջ (Անգլիա) Հովարտ Կարտինալը մեռեր է։ Նշանաւոր լեզուագետ և հայագէտ մ'էր։

— Գերմանիոյ կայսրը յառաջիկայ Հոկտեմբեր 9ին կամ 10ին Աւստրիոյ Կայսեր այցելութիւն պիտի տայ կ'ըսուի։

— Ֆրանսայի խորհրդարանը Հոկտեմբեր 18ին պիտի բացուի։

— Տահոմէի մէջ Սեպտեմբեր 7ին Ֆրանսական զօրքերը 4000 Տահամեցւոց բանակ մը ետ մղեցին՝ անոնց մէկ երրորդը կոտորելով։ Ֆրանսացիք 4 մեռեալ և 15 վիրաւոր ունեցեր են։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնաբաղխութիւնք. — Սալիհ Ֆիքրի էֆ. Զմէկածաքի (Խարբերդ) գայմագամ անուանեցաւ։

Աստիճանք. — Ատանայի տէֆթէրտար Միտհաթ էֆ. և Տիարպէրի մէքթուպի Շաքիր էֆ. իւլա Բ., Հանրօգուտ Շինութեանց նախարարութեան երկաթուղեաց, կամրջոց և խճուղեաց վարչութեան օգնականներէն Արամ էֆ. Մարկոսեանի Սանիյէ Միլիթմայիզ և Գէորգ էֆ. Ասլանեանի Սալիսէ, Սերաստիոյ հեռագրական և թղթատարական քննիչ Հասան էֆ. Սալիսէ և Քէսքիմի (Կարին) երևելիներէն Հաճի Արթին աղա Սաուլեանի Խամիսէի աստիճանները տըրուեցան։

Պատուանշանք. — Սպանիոյ արտաքին գործոց նախարար՝ Տէ Թէթուան Դուքսին Ա. Օսմանիյէ, Պրուսայի տէֆթէրտար Սալիստ պէյի՝ Բ. Օսմանիյէ, Ատանայի տէֆթէրտար Միտհաթ էֆ. Գ. Մէճիտիյէ և Հանրօգուտ Շինութեանց նախարարութեան օտար թղթակցութեանց քարտուղար Պօղոս էֆ. Ս. Մէճիտիյէ պատուանշանները տրուեցան։

Շքադրամք. — Արհեստից չքաղբամ տրուեցաւ երգչուհի Անթուան էֆէնտի Մէրճանի։

— Համտի պիլ՝ տնօրէն Կայսերական Թանգարանին, չորեքշաբթի օր Զմիւռնիա ուղեւորեցաւ պեղումներ կատարելու համար։

— Պանոսիմ-Գոնիա երկաթուղւոյն մասնակցող դրամատեարց անունները վատուցուած են Բ. Դրան :

— Զմիւռնիոյ ջուրը մենաշնորհի խնդրագրոց քննութիւնն աւարտած է :

— Տրապիզոնի նախորդ կուսակալին 5000 զրուշ հանգստեան թոշակ յատկացուած է :

— Եղեպիոյ մէջ 15 նոր նախակրթարաններ կը բացուին :

— Պոլսի (Պրուսա) մէջ Բէմիքօղլու աւագակը սպաննուած, իւր ընկերներէն երկուքը վիրաւորուած և երկուքն ալ ողջ ձերբակալուեր են :

— Օսմանեան Ապահովագրական Ընկերութիւն մը պիտի հաստատուի 440 հազար ոսկի դրամագլխով և 30 տարուան մենաշնորհով :

— Պրուսա-Մոստանիա երկաթուղին ապրանք ալ փոխադրել սկսած է :

— Տիարպիքի զաւարատն անհետացեր է :

— Հեռագրական և թղթատարական կայարանաց մէկ քարտէսը կը պատրաստուի :

— Աղիքներնու տղայոց յատուկ վարժարանը հաստատուած է ի Փապաթաշ : Աշակերտք յաջորդաբար կը հասնին :

— Սառնոցի գործարանն ի Սթէնիա՝ իւր սառնոցը կայուն ջուրերով չպատրաստելու հրաման ստացած է :

— Վանայ Աղբակ գիւղին վրայ յարձակող քանի մը աւագակներ հալածուելով, մին սպաննուեր և երկուքն ալ վիրաւորուած ձերբակալուեր են :

— Երեյի ածխահանքին համար գըծագրութեան և տարրալուծութեան յատուկ տեղ մը պիտի կառուցուի 20 000 զրուշ ծախքով :

— Այտընի Տէնիզլի և Սարուխան գաւառաց մէջ պաճարախո ծագեր է :

— Անդրիանուպօլսոյ հունձքերն այս տարի հարիւրին 20 պակաս են եղեր :

— Կելվի թարաքը գիւղախմբին Գէմալէր գիւղին մէջ անցեալ չաթու 13 տուն այրեր է :

— Զմիւռնիոյ երեւիներէն Մատթէոս էֆ. Պալեօգեան 500 մէճիտիյէ նուիրած է Համագային Անկեղանոցին :

— Յոյն Մետրապօլիտը իրենց չըջանակաց մէջ գտնուող յոյն վարժարանաց ցուցակը պատրաստելով, մէկ մէկ օրինակ պիտի յանձնեն կառավարութեան և Պատրիարքարանին :

— Եաֆա-Երուսաղէմի երկաթուղւոյ գծին շինութիւնն աւարտած է և բացումը պիտի կատարուի յառաջիկայ շաբթու : Ամբողջ գծին երկայնութիւնն է 87 հզմ. և ունի 7 կայարան ընդ մէջ 2 գլխաւոր կայարանաց :

— Օրտուի քարանթինայի պաշտօնեայ՝ Սափֆէթ էֆէնտի գիւղը ժամանակ առնական շոգենաւ մը դացած ատեն

նաւաւարներէն յարձակում կրելով ծանրապէս վիրաւորուեր ու կողովտուեր է :

— Զինուորական հիւանդանոցներուն համար հականեխական գործիներ կը բերուին :

— Խարբերդի նոր կուսակալը իւր պաշտօնատեղին ժամաներ է :

— Ճիսիւ Երքեհէի նամակատան պաշտօնեայն ու բարապանը հարցաքննութեան ենթարկուած են՝ Բէշանի թղթատարական պայուսակէն դրամաճորար մը անհետանալուն համար :

— Զմիւռնիոյ մէջ ծաղկախոս կը ճարակի եղեր, որուն օրական մէկ քանի հոգի զոհ կ'երթայ :

— Խալիլոյ նոր դեսպան՝ Քօլօպիանօ կոմսը երկուշաբթի օրը սովորական արարողութեամբք վեհ. Սուլթանին ներկայանալով, իւր յանձնարագրերը մատոյց :

— Բեքերսպուրի երկաթուղեաց համաժողովին գացող Օսմանեան պատուիրակները մայրաքաղաքս դարձած են :

— Հնարիչի արտօնագրերէ պարտք ունեցողները մինչեւ յառաջիկայ փետրվարու եւ զայնս, ապա թէ ոչ կը կորսնցնեն իրենց իրաւունքները :

— Երկաթուղեաց սակացոյց մը պատրաստելու համար յանձնաժողով մը կազմուած է :

— Պօլսոյ Ապահովութեան Սնտուկը Մուքթալը կալուածոց վրայ ալ փոխատուութիւն պիտի ընէ :

— Քիւլիք Զքմէհէի մօտերը ոչխարաց ծաղկախոս երեւան ելած է :

— Ասիական երկաթուղւով Հայտար Բաշա եկած ապրանք փոխադրութիւնը միայն ինք ստանձնելով Ապտուլլահ էֆ. անուն մէկը, Մախսուսէի վարչութեան հարիւրին 20 պիտի տայ իւր զուտ հատոյթէն :

— Հնուաւոր. — Հնտախտը կը շարունակէ դարձեալ իւր նախնիները հանուր աշխարհի վրայ. գրեթէ միայն մեքաղատ մնացինք : Անցեալ շաբթուէն ի վեր նոր վարակուող տեղերն են Նիւ-Եորք, Հոտէյտա, Չէյտիէ, Քրաքով և Բոտկորիցա (Աւստրիա), Բասէն և Կարին, Թորթում, Վէրուզ (Ատրպատական) և Թուշ (Մազէնտէրան) : Բժշկական մասնախումբ մը պիտի զրկուի Պարսկաստան հնտախտի դեղեր փորձելու և տեղւոյն բժշկաց օգնելու համար : Թաճիքը Պանի շոգենաւը Բլազովէն և Թեւիթիքի-յէն Լէնի-Բալէ պիտի զրկուին՝ այդ տեղերու մաքրանոցներու կանոնաւորութեան հսկելու համար : Նիւ-Եորքէ եկող նաւերը 10 օրուան քարանթինայի պիտի ենթարկին ի Քլազովէն կամ ի Պէրութ : Պուլկար կառավարութիւնը Չարիպրոտի կայարանէն 1 1/2 ժամ հեռու մաքրանոց մը հաստատած է՝ Եւրոպայէն եկող ուղեւորաց 3 օրուան քարանթինա սահ-

մանելով : Պարսկաստանի Ռեմիա և Սալմաստ գիւղերուն մէջ նուազիւ սկսած է Կարնոյ Բասէն գիւղին մէջ հնտախտ ծագելուն համար մաքրանոց մը հաստատուած է յԱրճէշ և 10 օրուան քարանթինա սահմանուած : Հնտախտը կանոնաւորապէս կը շարունակէ Համպուրկ, Պէրլին, Ալթոնա, Բեթերսպուրկ, Բարիզ, Համբուր, Ռուան, Շթէթթէն, Կովկասի քաղաքները, Թէհրան, Դաւրէժ, Սաուճպուլաք, Կէրէ, Համադան, Սպահան : Չորեքշաբթի օրը Մախսուսէի «Բարս» շոգենաւը Սինոպի մաքրանոցին մէջ իւր քարանթինայի պայմանաժամն աւարտելով մեկնելու պահուն, աղջիկ մը հնտախտէ բռնուելով, շոգենաւը 15 օր ևս քարանթինայի ներքեւ առնուեր և ուղեւորք անջատ վայր մը փոխադրուեր են առողջապահական պաշտօնէից հետ որք վարակուած համարուեր են : Իրենց տեղ ուրիշներ ղըրկուած են : Հինգշաբթի օր այդ ուղեւորներէն մէկն ալ բռնուեր է :

ԶՈՒԱՐՃԱԼԻՓ

Աղջիկ մը քահանային խոստովանելով իւր մեղքերը, կը յայտնէ ի մէջ այլոց թէ անպարկեշտ երգ մը երգած է :

Քահանայն, այսչափով գոհ չըլլար և կը հարցնէ թէ ի՞նչ երգ էր այն :

Աղջիկը կը փութայ եկեղեցւոյն մէջ բարձրաձայն կրկնել նոյն երգը :

Ամուսնանալէն դժգոհ մէկը՝ իւր բարեկամին :

« Կտակս պատրաստեցի : Բոլոր հարստութիւնս կը թողում կնոջս, այն պայմանաւ որ սգոյ պայմանաժամն անցնելուն պէս ուրիշի մը հետ ամուսնանայ : Այս կերպով վստահ եմ թէ գոնէ մարդ մը պիտի ցաւի մահուանս վրայ » :

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՎՐԻՊԱԿ

Այսօրուան Ծաղիկի 471րդ երեսի, առաջին էջին 28րդ տողին մէջ 1829 թուականը՝ պիտի լինի 1831 :

ԱՐԺԷՔ ԴՐԱՄՈՑ

Սամ. լիւան 100 զըշէն

Մէճիտիյէ	107 28	Վ. Եցնոց	102
Քառորդ մէճիտ	105 35	Բուսիյ քօլ	89 30
Մանր մէճիտ	100 30	Նաւուլէն	87 32
Մէթալիք	96 20	Գրեմից	54 20
Հինգնոց	400	Անդու լիւա	110 44

Մանէթ թղթադրամ 9 2

Գոնսօլիտէ	23 34	Բուս. երկ.	90 1/2
Թահլիլ Օսմ.	84 5	Թապիլիյէ	47

ՄՕՐԱ ԴՊՐՈՑՆ ՈՒ ԱՋԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆ

ՄՕՐԱ ԴՊՐՈՑՆ

(Մանկական Յիշատակարան)

Մայրս շատ բարեպաշտ էր :

Իւր գիտցած պարզ ընթերցանութեամբ — որ այն ատեն մեծ բան մ'էր ինքնին իգական սեռին համար — աւելի օգտակար կրցաւ ըլլալ, քան թէ հիմակուան շատ մը ուսեալ մայրերը : Առաջին անգամ որ լեզու պիտի ելլայի, « խաչ օգնեալ ինձ » սովորեցուց, և հինգ տարեկան չեղած արդէն ամէն օր արշալուսին « Յիշեսցուք, Չարթիք և Առաւօտ լուսոյ » կ'երգէի իրեն հետ ծնրադրած : Ամէն անգամ որ ուտելիք մը կամ խաղալիք մը ուզէի իրմէ, սիրով կուտար, պայմանաւ որ սակայն հատուած մը գոց արտասանեմ ու և է աղօթքէ, և իմ թոթով մոթով աղօթքներս քանի՞ հրճուանաց արցունքներ կը խլէին աչքերէն :

Մեր տունը վաղ մը չէր սակայն, և ոչ ալ մայրս սեւեր հագած մայրապետ մը, այլ չքնաղ գեղեցիկութեամբ օժտուած աշխարհիկ կին մը, որ քսանամեայ հասակին մէջ այրի մնալով հօրմէս, իւր ամբողջ սէրը, յոյսը, գուրգուրանքը ու խնամքը կեդրոնացուցած էր մի միայն իմ և վեցամեայ փոքրիկ եղբորս վրայ, և որ զմեզ աստուածապաշտութեան շաղկին մեջ կրթելով, կը կարծէր կատարած ըլլալ իւր մայրական պարտականութեանց երախայրիքը :

Օր մը Գերական մը տուաւ ինձ . Գերական մը՝ որմէ չկրնար բաժնուիլ մարդ, ամբողջը պատկեր . թուղթը դարձուր և դարձեալ պատկեր : Այս ի՞նչ է մայրիկ, — տունն է տղաս : Ահա՛, կատուն, կատուն, տե՛ս, մայրիկ, պէպէք ի՞նչպէս վիզը ծօեր է . չաքար տո՛ւր պէպէքին, մայրիկ, կուտա՛ս հա՞. օ՛հ, օ՛հ, թռչուն մը, մայրիկ, թռչուն մը . այս ի՞նչ է, մայրիկ — ուլիկ մ'է, տղաս : Ուլիկ մը կ'ուզեմ, մայրիկ — երբոր դասերդ սովորիս, ուլիկ մը պիտի առնեմ քեզի, սիրելիս : Ո՛չ, ոչ, հիմայ կ'ուզեմ — անկրթութիւն է այդպէս խօսիլդ : Փորս անօթի է, մայրիկ . . . և առաջին դասը լմնցաւ :

Հետզհետէ պատկերներէն անցանք գրերուն ա. բ. գ. գ. բ. ա. և ամիս մը վերջ արդէն Գերականն աւարտած էի և փոքրիկ հատուածներ կրնայի կարդալ ինքնիրենս, առանց Ծրէօպէլի անունն իսկ ըսած ըլլալու : Ընթերցանութեան սկսելէս ի վեր մօրս վիճակը անտանելի դառնալ սկսած էր, որովհետեւ այնպիսի հարցեր կ'ուղղէի խեղճին, որոնց չէ թէ ինք, այլ հիմակուան շատ մը դաստիարակներն իսկ անկարող են պատասխանել : Մայրիկ

այս աստղերը ո՞վ չինեց — Աստուած պապան : Ի՞նչէն չինեց — . . . : Հա՛ մայրիկ, ի՞նչէն չինեց, ըսէ, — տե՛ս, տղաս, լուսընկայ քեռին քեզի կը նայի կոր : Եւ այսպէս հազար ու մէկ հարցումներ, որոց բնականաբար չպիտի կրնար պատասխանել, և որպէս զի իւր հեղինակութիւնը չկորսնցնէ, դժուարին հարցերու առաջ միշտ կը ջանար ուղարկութիւնս ուրիշ առարկայի վրայ դարձնել, և ոչ թէ սրտնեղութեամբ պօռաւ « Էօլիւչիւդ քէօրիւյէն չինեց, չես թողուր որ խելքս գըլուխս խաղվէս խմեմ » :

Թէեւ Հեգարան կարդալու պէտք չունէի, սակայն որովհետեւ առանց մէկը աւարտելու միւսին անցնիլ անկարելի կը համարուէր այն ատեն, սկսանք դարձեալ, « Եւ երէ այր նուրան երան եչ այր լիւն եալ երանեալ » և ամէն անգամ որ հիւրեր ընդունէինք, կը բերէի գիրքս ու կ'սկսէի ջուրի պէս կարդալ ու հիացումներ խել ամենէն . աւելորդ է կրկնել թէ եկեղեցական աղօթից ու երգեցողութեանց մէջ ևս օր ըստ օրէ կը յառաջանայի և տարեգլխոյն երբ մեծ սաղմոսը լմնցուցի, արդէն գոց գիտէի Փառքի բարձրանը, Ողորմեան ու քիչ մ'ալ Հաւատամք :

Հոս կ'աւարտէր Մօրս վարժարանը, ըստ որում ինքն ալ դժբաղդաբար աղկից աւելին չէր գիտեր որ ինձ սովորեցնէր . սակայն չկարծէք թէ մի միայն աղօթք և ընթերցանութիւն սովորեցնելով կը բաւականանար, այլ ընդհակառակն ժամերով քովը կը նստեցնէր զիս ու այլ և այլ պատմութիւններ ու մեղի վերաբերեալ դէպքեր պատմելով կը սովորեցնէր թէ, ո՞ր պարագային մէջ ինչպէս վարուելու է, եւ թէ մեծ մարդու մը քով ի՞նչպէս նստելու խօսելու և խօսք հասկցնելու է : Զատիկի, Միունդի և այլ պաշտօնական օրեր, սպասաւորին հետ զիս այցելութեան կը զրկէր մեր բարեկամաց տունները, և ես արդէն կարգը գալուն կրնայի պարագային յարմար երկու խօսք ընել, բնաւ չմոռնալով « Ընրամբեր էք, հրամանքնիդ, շնորհակալ եմ, ներեցէ՛ք » և այլ քաղաքավարական բառերը, զոր այն ժամանակ հինգ վեց տարեկան տղու մը բերնէն լսել, պարզապէս հրաշքի մը ականատես ըլլալ ըսել էր :

Օր մը բարձրաստիճան պաշտօնատար մը ձիով կ'անցնէր մեր թաղէն . և որովհետեւ մօրս ըրած պատմութիւններէն լսած էի որ բարեկիրթ տղայ մը պարկեշտօրէն կենալուն համար սիրուած էր իշխանէն, իսկոյն բարձրկէլ տեղ մը ելայ և կուրծքերս կոճկելով ամենայն պարկեշտութեամբ բարեկիցաց, պաշտօնատարը մօտեցաւ և փողոցին մէջ ա-

նառակութիւն ընող տղայոց վրայ ուղարկութիւն դարձնելով քիչ մնաց որ անտեսէր զիս ու ծաղր ու ծանակ դարձնէր այդ սրիկայներուն առջին . յանկարծ ետին դարձաւ ու զիս միս մինակ այս դիրքիս մէջ տեսնելով բարեւ տուաւ . ձին կանգնեցուց և հրամայեց որ զիս քովը տանին, ուր քիչ մը սիրելէ համբուրելէ վերջ հետս խօսեցաւ, հօրս անունը և որու զաւակ ըլլալս լսելուն պէս աչքերը լեցուեցան և հրամայեց որ յաճախ իւր ապարանքը երթամ . որովհետեւ հայրս շատ ծառայութիւններ մատուցած է եղբր իրեն ժամանակաւ, և գիտէ՞ք այդ մէկ բարեւ ինձ որչա՛փ նպաստեց վերջը :

Եւ սակայն մօրս արտակարգ գործը շատ աննպաստ եղաւ ինձ ֆիզիքական տեսակէտով . բնաւ չէր թողուր որ խաղ մը խաղամ, քար մը նետեմ . տեղէ մը ցատկեմ և կամ մէկու մը հետ գօտեմարտիմ . վախնալով որ մի գուց հիւանդանամ և մէկ տեղս ցաւի . եթէ գիտցած ըլլա՛ր թէ իւր այս ընթացքով ո՞րչափ կը մնասէր կազմուածքիս . սակայն ի՞նչ չա՛հ, նա կը կարծէր թէ խելքս ու միտքս մշակելով ու զիս փափուկ մեծցնելով կատարեալ դաստիարակութիւն մը տուած կըլլար ինձ, և ես կորովի առողջ, յաղթանդամ, սակայն բնաւ ոյժ չունէի, մինչև իսկ երեսոս սպասուհիները կը լուային ու կերակուրս ծառայները կը կերցնէին . փայտ մը տաշել կամ խաղալիք մը շինել ինչ է չէի կրնար, որովհետեւ ուրիշները կը շինէին ինձ համար, ու ես զգուշանալով զգուշանալով մինչև այսօր այնպէս վարժուած եմ որ, տեղ մը քամ մը չեմ կրնար քամել և ոչ իսկ բրթած կոճակ մը կարել, ձեռարուեստի մէջ բացարձակապէս անկարող մէկ մ'եմ :

Թէեւ բնաւ չէի խաղար, սակայն այս բան արգելք մը չէր որ խաղացողներուն մէջ երկպառակութիւն ձգելով տղայքներն իրարու հետ կռոււնդնէի ու ապա դատաստանին կտրէի, բայց կը կարծէք թէ խաղացողներու դատաստան ընել դիւրին բան է . ընդհակառակն հարիւր տեսակ խաղեր կան և իւրաքանչիւրին ալ հմուտութիւնը պէտք է ունենայ դատաւոր մը, որպէս զի արձակած վրձիւը կշիռ ունենայ և տղայք զինքը եռահա՛ներով չփախցնեն, սակայն ես ուրիշ միջոցներու գիմելով մերթ հաշտարար եղանակաւ կը վերջացնէի գործը և մերթ ալ իրենցմէ առնելով իրենց կը ծախէի, բան մը զոր դատաստաններէն չատերը կ'ընեն աշակերտաց, երբ այս վերջինները դասագիրք ի ձեռին ներկայանան հարցնելու :

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ

Մեծ պահոց երեքշաբթի օրը, որոշուեցաւ որ Ազգային վարժատունն երթամ. ի՞նչ ուրախութիւն. այլ ևս թաղեցի տղոց պէս ես ալ առտուն կանուխ դպրոց պիտի երթայի ու երեկոյին վերադառնայի. այս առթիւ մայրս, — միշտ մայրս — ասկեթել ջանքս մը ապեղնագործած էր ու բոլորէ ալ մեծկակ միևնոեք մը պատրաստած, զորս հետերնիս առնելով մտանք դպրոցէն ներս: Դրոշի դռնէն ականջնուս հասած աղմուկը, ժխորը, ողբը, կոծն ու վայնասունները, արդէն յայտարար նշաններ էին ներսի իրարանցումներուն, և երբ ներս մտանք, բոլորովին տարօրինակ մթնոլորտի մը մէջ գտնելով զիս, իսկոյն մօրս փարեցայ: Երբ դպրոց կ'ըսեմ, չեմ յուսար որ նախապաշարուիք դասարաններ, գրասենյակներ, նստարաններ, ուսուցիչներ ու դաստիարակներ քրեակայելով, այլ երկայն ու նեղ սրահ մը — զոր Աստուած սրահ արասցէ — ուր իրարու վրայ խռնուած են երկու հարիւրէ աւելի տղայք, ոմանք միևնոեքի և ոմանք ալ չոր գետնին վրայ ծալապատիկ նստած: Տեսարանը շատ ուշագրաւ էր, մանաւանդ ինձ համար որ առաջին անգամ հանդիսատես կ'ըլլայի տարօրինակ իրարանցման մը. տղայոցմէ ոմանք բարձրաձայն կը սերտէին իրենց դասերը, և ոմանք ալ աններդաշնակ եղանակներով Շարական կ'երգէին. չորս հինգ հոգի ոտքի վրայ կեցած իրարու հետեւեալ հարց ումները կ'ուղղէին.

— Ըստ մասանց բանի քերականութեան զի՞նչ է բառս չողգամ:

— Է անուն:

— Ըստ բաժանման անուանո՞ց:

— Գոյական:

— Ըստ բաժանման գոյականաց:

— Հասարակ:

— Ըստ թռուոյն:

— Եզակի:

— Ըստ հորովման:

— Ուղղական:

և մէկ քանիներն ալ վաղուան կարդացուելիք ճաշոց գիրքը կը սերտէին. այն միակ բանը որուն խելք չէի կրնար հասցնել մէկ երկու տղայոց ոտքերնուն մատուցները բռնած մերթ գետնին վրայ գալարելին և մերթ ալ աղիողորմ ձայնիւ կաղկանձելին էր. — Թշուառները ֆալսիսան կերած են եղբր, իսկ վարժապետը, այս երկու հարիւր տղայոց միակ յիմարապահը, սրահին մէկ ծայրը բարձրաւանդակի մը վրայ նստած մէկ կողմէն մեծ սանդիկ մը մէջ սամիս ծեծելով կը բաղէր զոր մուրով խառնելով մեկան պիտի շինէր և միւս կողմէն առջևը ոտքի վրայ կեցած տղոց դասերուն կը նայէր, բնաւ չը

մոռնալով մերթ ընդ մերթ գոչել « ծօ Թշուառականներ, կնկան բաղնիք դարձուցիք դպրոցը. հիմա մէջքերնիդ կը կոտրեմ » և այս ոպառնալիքին յաջորդող լուսթենէն սգուտ քաղելով, ներկայացաւ մայրս վարժապետին:

Եթէ Մատամ տը Սէվինիյէ, Բար Գարբանթիէ և կամ ուրիշ հոգակաւոր կին հանձար մը ներկայացած ըլլար իրեն, այդչափ պատիւ չ'պիտի ընէր վարժապետը, որչափ ըրաւ մօրս. իսկոյն վարժապետը ու փէշերն իրարու վրայ բռնած բարեւ առնելով, որովհետեւ իւր կատարեալ տգիտութեամբ բաւական հոտառութիւն ունէր հասկնալու թէ մօրս խօսքը կշիռ կրնար ունենալ իւր պաշտօնավարութեանը մասին և թէ իմ պատրուակաւ, անկեց ստակ քաշելը շատ դիւրիւն բան էր: Ուստի միևնոեք ծառային ձեռքէն խլելով իւր իսկ քովը փռեց ու զիս վրան տեղաւորցուց. ու դպրոցին վիճակին վրայ այլ և այլ տեղեկութիւններ հաղորդելէ յետոյ, ի պատիւ մօրս, ընդհանուր ներողութիւն շնորհեց յանցաւոր աշակերտներուն:

Թէ և արդէն լաւ ընթերցանութիւն գիտէի, սակայն որովհետեւ իմ աւարտած գիրքերէս օգուտ մը չէի քաղած, վարժապետը, նորէն ֆերականէն սկսաւ, զոր շարժեմ մ'աւարտեցի և ըստ ընկալեալ օրինաց վարժապետին պալսիշը բերի, պալսիշ մ'ալ խզեսցուքին (1). մէկ մ'ալ Սաղմոսին, և վեց ամիս վերջ սկսայ Նարեկ կարդալ, Նարեկ որ գիտութեան վերջին բառն էր այն ատենը և իմ հասակակիցներս չէին կրնար իսկ երազել այդպիսի երանութիւն մը:

Օր մը վարժապետը հարսնիք գնաց երգելու, և չափահաս տղայոցմէ մին ընդհանուր կառավարիչ կարգեց, լիազօր իշխանութիւն տալով սաստեղու, հրամայելու, իշխելու և անհնազանդները միաքը պահելու, սակայն նոր կառավարչին յոխորտանքը անմարսելի ըլլալով տղայոց, ընդհանուր իրարանցում մը յարուցին և դպրոցը տակն ու վրայ ըրին. հետեւեալ օրը այս ծանրակիւռ եղելութիւնը լսելով վարժապետը, սրա ֆալսիսանին տնօրինեց, որ բաւական ժամանակէ ի վեր վերցած է եղբր: Իսկոյն տասնեակներով գաւազաններ կտրուեցան մօտակայ պարսէզներէն և սկսաւ Իթիֆէհէմի կոտորածը, չափ բաթ — մեղայ վարժապետ, աման վարժապետ, մէկ, տասը, քսան, յիսուն, և այլն ըստ կազմուածքին. ամբողջ ժամեր տևեց այս արարողութիւնը և ես

(1) Երբ աշակերտը չեզարանին մէջ այն տեղը հասնէր ուր գրուած է «խըզեսցուք զկապանս նոցա», իսկոյն վարժապետը աշակերտին օձիքը կը շոյէր ու տուն կը ղրկէր որպէս զի փոխարէն պալսիշը մը բերէ:

այս միջոցին տեղս սմբած մերթ կը դողդողայի և մերթ ալ ողբեր ու աղիողորմ կականերէն զգածուելով լուի մընջիկ կը հեկեկէի սպասելով. իսկ վարժապետը կատղած, փրփրած վագրի մը նման ակուայները կը կրճտէր, ու իւրաքանչիւրին նորանոր հայհոյութիւններ ստեղծելով գաւազանները կը սաստկացնէր. մինչեւ որ հետզհետէ իջաւ բարկութեան սաստը ու յոգնած, դադրած յափրացած փռուեցաւ միևնոեքին վրայ. « հը հը հը, Թշուառական իրարեր, այսպէս պիտի ընեմ ձեզի, պիտի ջախջախեմ ոսկորնիդ » որոտալով. այս ընդհանուր պատիժէն մի միայն ես և քանի մը մագլը տղայքներ ազատեցանք. սակայն իմ վերայ գէշ տաւաորութիւն ընելով, չաբաթներով քունիս մէջ սրա ֆալսիսանին կ'երագէի ու վախէս կը պոռայի:

Յաջորդ օրը դարձեալ ամէն մարդ իւր դասերն սկսաւ չարունակել որպէս թէ բնաւ բան մ'եղած չ'ըլլար. միայն թէ քանի մը օրերու ընթացքին մէջ խիստ պատիժներ չը տնօրինուեցան տղայոց, այլ պարզ ապտակներ, գաւազաններ, ականջ քաշելներ, և, որոնք հաց ու պանիր ըսել էին: Թափէն շատ չէին վախնար տղայքը. բայց պէտք է նախ թափը բոցատրել. թափը թիւ (քիւրէկ) ձեռով բարակ տախտակ մ'է, զոր կը զարնեն աշակերտին ափերուն և որ սաստիկ ցաւ կը պատճառէր, այլ ամենածանր պատիժը սիսեռի (նօհուտ) պատիժն էր. գրիւ մը սիսեռ կար միշտ դըպրոցը պատրաստ և երբ աշակերտ մը պատժել հարկ ըլլար, սիսեռը գետինը կը փռէին ու աշակերտը վրան ծունկ չըքցուցած կը նստեցնէին, բայց այս չափով չէր լնիար. մէկ ձեռքին վրայ մեծ ճաշոց մը կամ մօշորուպա մը լեցուն ջուր կուտային 3 կամ 4 օրս ծանրութեամբ, զոր պէտք էր միշտ մէկ ձեռքով վեր բռնած պահէր և շատ անգամ ասով ևս չը բաւականանալով, վիզէն ալ ծանր բան մը կ'անցնէին:

Որչափ հիննայի դպրոցը, այնչափ սիրտըս կը քարանար, ու նորանոր պատիժներու հանդիսատես կ'ըլլայի. դըպրոցին մէջ սովորութիւն կար որ տղայոցմէ մին պալսուցնէր (կառավարիչ) կը կարգուէր և ով որ օրինաց հակառակ ընթացքի մէջ գտնուէր, առաջին ու երկրորդ ազդարարութիւններէ վերջ իւր տեղն երթալով, բարձրաձայն կը պոռար յանցաւորին անունը. « Եղբայր Թորոս, հրամմէ ատեան ». — կը մոռնամ ըսել որ ամենքս ալ իրարու եղբայր տօնուոր տալ պարտաւորեալ էինք — . . . ձայն չ'կայ. դարձեալ « Եղբայր Թորոս, հրամմէ ատեան » երրորդին ամենայն ինչ կատարեալ է, այլ վայ եկաւ անհնազանդին գլխուն:

Եւ եղաւ որ օր մը եղբայր Կիրակոսը

կարեւորութիւնն չտուաւ պաշտօնէին ու երրորդ հրաւերին ալ ատեանը չը հրամայէր . . . ընթերցանութիւնն սովորելու համար . իսկոյն վարժապետը հրամայեց որ չորս հոգիով երիտասարդներեղբայր կիրակոսը բռնելուն պէս պառկեցուցին ու Փալախանը ոտքն անցուցին, նոյն հետայն զանգակը զարնուեցաւ, բոլոր տղայք ոտքի ելան, ու սկսան 40 տունէ բաղկացեալ պարսաւականը բարձրաձայն երգել:

Ինչ ես պառկեր սիրուն ընկեր,
Խաղը ըրէզիլ գէլգէ ես եղեր.
Բարով թէ հոս չէիր եկեր,
Դպրատանը աւեր եղեր:
Գլուխդ իշու նման է,
Ականջդ թիղ մը երկայն է.
Քեզի ծնողը փիւշման է,
Պառկած տեղէդ ո՞վ պիտ' հանէ:
Այսուհետեւ անգամ մըն ալ,
Պիտի ընե՞ս գէշ բան մըն ալ.
Որ պէտք ըլլայ ոտքերուդ (նալ),
Էնքսէրներով զարնելու տալ:
Այլ կանչուռտես անուշ բան բեր,
Անուշ բանին տեղը քար կեր . և լն:

Այս արարողութենէն վերջ ընդհանուր լուծութիւն տիրեց, որուն յաջորդեցին գաւազանի արտակարգ շառաչիւններ, մէկ, տասը, յիսուն, բնաւ ձայն ձուռն չկայ եղբայր կիրակոսի կողմէն, ո՛չ զեղչի, ոչ ապաշաւի և ոչ ալ աղաչանաց, բան մը որ քաջութեան առաջին յատկանիշը կը համարուէր աշակերտաց մէջ. և որուն ինձմէ զատ շատեր կը բաղձային նմանելու, սակայն ամէնուն կազմուածքը չէր ներեր: Բարեբաղդաբար Աւագ քահանայն «ինչ ես պառկեր» լսելով, փութացած եկած էր հոգի մը փրկելու, որուն մուտքովը դադարեցան գաւազանի հարուածները, և անմիջապէս սկսաւ խոստովանութեան բանաձևը, զոր պարտաւորեալ էր կրկնել ամէն ծեծ ուտող:

— Գաւազանը ուսկի՞ց ելած է:
— Արքայութենէն, պատասխանեց եղբայր կիրակոս և քեմեցեմա մը ընելով վարժապետին, վերջ տուաւ արարողութեան:

Բայց այնչափ երկար տևեց պատիժներու պատմութիւնը, որ չկրցի պատմել թէ, ի՞նչ կը կարգայինք, ի՞նչպէս դաս կը սովորէինք, ի՞նչպէս կը ճաչէինք, և վարժապետը ի՞նչպէս առիթը գտած էր ամէն օր հետս ճաչելու, և լն. և լն:

ԱՆՑԱՐՈՅՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեր դպրութեան հոգն ու պատիւը կը պահանջէ խօսիլ այն թռուցիկ գրականութեան վրայ, որ լոկ թեթեւութիւն կը բուրէ և կարծես նպատակ ունի մի միայն ցանկութեամբ վարակել ընթերցողները. առանց մեր դիտողութիւնները լսելու, անձնիւր ոք կրնայ ինքնին երևակայել թէ գրականութիւն մը՝ որ աղտոտ նկարագրութիւններու հողին վրայ կ'ուճանայ, ի՞նչ տարբերներով կը սնանի և ի՞նչ կ'արտադրէ . . .

Տարիներ առաջ՝ մինչդեռ հասարակութիւնը տակաւին չ'ունէր գրականութեան սէր ու ճաշակ, և լեզուն ոչ իր որոշ սահմանները, Չիլիսկիրեաններ, Տէտէեաններ և դեռ ուրիշներ, մանաւանդ Մամուրեան և Իւթիւճեան որ կրնանք քսել մեր գրագէտներու, լեզուի նորոգիչներու ամենափայլուն դէմքերը եղան, տեւի քան քառորդ դար անխոնջ, յարատեւ տընեցան, քրտինք թափեցին, աշխարհիկ գրականութեան ծընունդ տուին, օտար դպրութեանց գանձերը, փրկական անուանի գործեր հայերէնի շրջելով՝ մեզ բերին նոր լեզու, նոր ոճ, նոր գաղափար, ճաշակի ազնուութիւն, փափկութիւն. իրենց թարգմանութիւնները հռչակաւոր հեղինակներու է՛ն գեղեկիկ և լուրջ գործերն են, որոնցմով լեցուցին հրապարակը, դրոշմեցին գրական աշխարհը: Ազգին այդ երախտաւորները՝ ինքնաստեղծ, հայատիպ հեղինակութիւններով ալ աշխատեցան մեր իմացական զարգացման, բարեշրջեցին ժողովրդի կեանքը. անոնց գրութիւնները՝ յոյժ կենսաւէտ, կենդանի էին և կարկառուն. ստեղծողի հրաշակերտողի մատներով կազմուած, աշխատեցան լուսաւէտ, դաշնակաւէտ որ բոլորովին տիրեցին մեր մտքին, սրտին ու հոգւոյն. բանաստեղծական սեթևեթիւն տակ, գեղեցկագիտական ճաշակի հետ հրահանգիչ և իմաստալից էին. անոնց հեղինակութեանց մէջ, հեղինակին հոգին այնքան բարձր կը խոյանայ, միտքն այնքան խոր կը թափանցէ, գործիչը ամէն մէկ շարժելուն այնպիսի դողդոջուն շնորհ մը թողուցած է թըզթին որ՝ մէկ անգամ կարդալէ վերջ, վերստին ձեռք կ'առնենք, կը կարդանք ու կը կարդանք անյադ աչքերով և հոգին կը խայտայ, կեանք կ'առնու, ո՛չ թէ կը մարի, կ'ապականի, կը չիջանի . . .

Հիմա ալ կայ անզուսպ եռանդ մը, գրողներու սանձարձակ լէզէօն մը. վիպական անձա՛ն թարգմանութիւններ պակաս չեն. օտարին թափթփուքը, խենչանքը թերթօնի ձևով, լրագրական հրատարակութիւններով լոյս կը տեսնեն՝ ծանրանալով զանոնք մարսելու անկարող

ստամոքսներու վրայ. բայց արդէն վիպական թարգմանութեանց ժամանակն ալ անցած է, ժողովուրդն աւելի հիմնական մտային անունդի պէտք ունի, օտարներու մոլեգին կրից արտադրութիւնքն անպէտ են ու վնասակար և աղտոտ բոյր մ'ունին. է՛հ, ի՞նչ կ'ուզէիք որ ընէին այսպիսի հանգամանքներու մէջ անոնք՝ որք աւելի կ'ապրին իրենց քմահաճոյքին քան թէ ժողովրդին համար. օտարին կեանքն ու գաղափարները, անոր սիրտն ու հոգին, մոլութիւններն ու ունակութիւնները մեզ փոխանցելու ճիգ մը կ'ընեն, Ֆրանսական կաղապարներու մէջ ձուլուած չինծու, մեռած, ակտաբոյր հատակտորներ կուտան մեզ, իբրեւ հանձարի գործեր, իբրեւ տաղանդի ստեղծագործումը, իբրեւ սքաշելիք:

Հասարակութիւնը հիմա դատապարտուած է ճարակ գտնել այդ ամուլ գրուածներու մէջ, որոնք եթէ նոյն իսկ առաջնակարգ գործերէն խմբագրուած լինէին, եթէ գեղեցկակերտ դարձուածքներով, գունագեղ բառերով գերական գոհարաներ իսկ լինէին, դարձեալ անպէտ և մահաշունչ են մեր ժողովրդին համար. այդ հրապուրիչ զգլխիչ գրուածներն պիտի կարդա ո՛չ թէ ըզգալու մարդկային վշտի հեծկոտուկը, ուսումնասիրելու կեանքի ընթացքը, և բարքերն իմաստասիրելու, այլ հեշտութեան ժամեր վայելելու համար:

Եթէ մի անգամ մտածենք թէ՛ այդ ակտաբոյր զգլխիչ նկարագրութիւնները քանի՛ քանի՛ կոյս մոքեր կը պղտորեն, անբիծ հոգիներ կ'ապականեն, ծաղիկ սերունդներ կը խամբեն, պիտի տեսնենք որ այդ գունակ գրականութիւն մը, ո՛ր և է նըպատակ և օգուտ չ'ունենալէ զատ, ջլատիչ հիւանդութիւն մ'է որ տարաբաղդաբար իբրեւ համայնապարփակ մուշ հետզհետէ կը տիրապետէ մատաղ հոգիներու վրայ:

Այսօր ունինք գրական մշակներ, որոնք ոտքի մը թոմբուլիկ պնդը, գիրուկ ձեռք մը, կամ կաթնաթոյր լանջը մը նկարագրելու համար իրենց բոլոր ոյժն, լեզուի բոլոր հմայքն՝ ու երանգները դուրս կը թափեն, կը հիանան իրենց թեթևամտութեան վրայ և կը փափագին որ ուրիշներն ալ սքանչանան. իսկ եթէ մէկը ելնէ քիչ մը լուրջ բաներու վրայ խօսի, իսկոյն կը բացագանչեն. «Ի՛նչ հին մարդ, Ո՛րքան սքողաստիք»:

Նւ սակայն, ինչ որ ամենէ աւելի ծիծաղ և զայրոյթ կը գրգռէ, խալիկ ձևերն, կեղծ ու միամիտ հառաչներն են կարգ մը մահերգակ գրողներու, որոնք չ'են կրնար ըմբռնել թէ՛ կեանքի ամենամեծ բարեբարը գուարթութիւնն է

և թէ՛ գրական աշխատանքը պարտի միշտ ուրախ լինել, զուարճացնելու ընթերցողն, հրճուեցնելու անոնց սրտերը. ի՞նչ օգուտ ունին այն տխուր վախճաններն, սևաբոյր աղաղակներն, զորս հրապարակի վրայ լսելի կ'ընեն ոմանք, առանց մտածելու թէ՛ գրագէտ մը կոչումն ունի լոյս տալ, կեանք տալ ժողովրդին, և ո՛չ թէ մեռցնել, թունաւորել զայն:

Այո՛, պէտք է յոյժ պահանջոտ լինիմք գրականութեան մասին. պարտինք մէկ կողմ թողուլ օտարին խնեցանքը, մէկ կողմ թողուլ թեթեամտութիւնը, և սուրբ զգացումներով, անմեղունակ ներշնչումներով գրել մեր կեանքի, մեր դպրոցներու, կեդրոնացող և բնագաւառի, մեր վանքերու և մեր ուխտատեղիներու վրայ:

ՎԱՀՐԱՄ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Յ. Գ. ՓԵՂՔԱՅԵԱՆԻ

ՆՈՐ ԴԱՍԱԴԻՔԵՐԸ

Տեղագրութիւն Կ. Պոլսոյ եւ շրջակայից. յատակագիծ պատկերով Վափուրի, Յաւելուած՝ Կ. Պոլսոյ խաներուն ընդհանուր ցուցակը, վարժարանաց Էւ ժողովրդեան համար..... փարայ 100

Աշխարհագրութեան Նախապատրաստական Դասագիրք. Բ. տպագրութիւն հիմնովին բարեփոխելով..... ՂԸՆ 3

Աշխարհագրութիւն Պատկերազարդ ՂԸՆ 4

Թուագիտութեան Նախապատրաստական Դասագիրք. Մտաւոր եւ գրաւոր. Գ. տպագրութիւն..... ՂԸՆ 3

Թուագիտութեան Նոր Դասագիրք. Տեառական եւ Գործնական. կը բաժնուի երեք մասանց

Մ---Ա--- Չորս գործողութիւն ամբողջ թուոց, 600ի մօտ հրահանգներով եւ գործնական խնդիրներով. Բ. տպագրութիւն բարեփոխելով եւ ճոխացելով..... ՂԸՆ 4

Մ---Բ--- Չափք, կշիռք եւ դրամք. Տամարդակն կոտորակք. Յատկութիւնք թուոց. Հասարակ կոտորակք. Թուրքիոյ հին եւ նոր չափուց եւ կշուց բաղադրութիւնք, մօտ 500 հրահանգք եւ գործնական խնդիրք. Աղիւսակք..... ՂԸՆ 4

Մ---Գ--- Գործածութիւն թուաբանական գործողութեանց. կշուութիւն եւ Համեմատութիւն. Երեք կանոն. Շահուկանոն. Զեղչման կանոն. Միջին պայմանաժաման կանոն. Միջնորդչէք. Հարիւրին պայշափ շահ եւ գէն. Ընկերութեան կանոն կամ Բաշխումն Համեմատական. Սնանկացեալի մ'ստացուածոց բաշխումն. Միջին Հաշիւ. Խառնուրդի կանոն. Մետաղաց բաղադրութեան կանոն. Բառակուսի եւ Խորանարդ արմատք. Մէթրական դրութիւն. եւ այլն. եւ այլն. բաց ի բաղմամբ հրահանգներէ՝ 300ի մօտ գործնական խնդիրներ..... ՂԸՆ 4

Ա. եւ Բ. Մ---Դ--- Ի միասին կազմ. ՂԸՆ 7 1/2

Ա. Բ. Գ. Մ---Ե--- » » » 10

ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՈՒՍՈՒՄՆԱԲԱՆ

ԵՒ

Մ Ա Ն Կ Ա Պ Ա Ր Տ Է Ձ

Մեր կէտիկ-փաշայի և Գում-գարուի մանկապարտէզք վերաբացուած և պարապմունքք արդէն սկսած են:

Կէտիկ-փաշայի Մանկապարտիզին կից ունիմք այժմ Միջնակարգ Ուսումնարան մ'եւս, որ գերմանական իրական Ուսումնարանի (Քեալ շուլի) ծրագրով կ'աւանդէ Հայերէն, Թուրքերէն, Ֆրանսերէն, Գերմաներէն, Անգլիերէն լեզուները և ուսողութիւն, բնագիտութիւն, և այլն: Բոլորից համար նաև ձեւագիտութիւն և ձեւագործ. վարուց և բարուց մասին կատարեալ հոգածութիւն: Մանկապարտէզներու համար կ'ընդունուին 2-12էն մինչև 6 տարեկան երկսեռ տղայք: Աւելի տարիք ունեցողները կը մտնեն Ուսումնարան:

Իրենց զաւակաց կրթութիւնը մեզ յանձնել ցանկացող Պատ. ծնողք կը հրաւիրուին դիմել, Գումգարուի Մանկապարտիզին համար՝ ի ձեռք զփողոց, իսկ Կէտիկ-փաշայի Մանկապարտիզին ու Միջնակարգ ուսումնարանին համար՝ Կէտիկ-փաշայի գլուխը Մագուլեանի ընդարձակ և հովասուն տունը:

Հիմնադիր-ՏԳՈՐԷՆ

Կ. ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ

ՀԱՒԱՔԱԾՈՑ

ԸՆՏԻՐ ԳՐՈՒԱԾՈՑ

Ա. Տարի, Բ. Տիպ

Սոյն դասագիրք՝ բաց ի նոր և ընտիր աշխարհաբար հատուածներէ՝ կը պարունակէ 16 շարագրութեանց պատկերներ, զանազան կարևոր ծանօթութիւնք և 90 շարագրութեանց նոր և ընդլայնեալ նիւթեր, ուստի ներկայս կրնամք յանձնարարել թէ՛ իբր ընթերցման և թէ՛ իբր շարագրութեանց դասագիրք, միակն իւր տեսակին մէջ:

Դին 5 դահեկան:

Կեդրոնատեղի՝ Կ. Պոլսոյ, Հաճօրու խան, թիւ 29:

ԳԱՌՆԻԿ ՀԻՍՍԱՐԼԵԱՆ

ԵՒ

ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱՆԴՕՂ

Վկայեալ փաստաբանք Օսմ. Կայսր. իրաւաբանական վարժարանէն:

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ հաստատուած են ի Ղալաթիա, Տէմիր խան, թիւ 22, և կ'ստանան թէ՛ մայրաքաղաքէս և թէ՛ գաւառներէ յանձնարարելի հուգուգի, շէրիի, Արեւտրական ու պատժական դատարանաց վերաբերեալ ամէն տեսակ դատեր և Գործառնութիւններ, մենաշնորհներու (իմթիալ) համար ձեռնարկութիւններ, ինչպէս նաև պաշտօնական գրութեանց, աղերսագրոց, պայմանագրութեանց, և այլոց խմբագրութիւն կամ թարգմանութիւն ամէն լեզուաւ:

ՓՈՐԱԳՐԱՏՈՒՆ

ԵՐՈՒԱՆԴ ՓԱՆԳԱՅԵԱՆ

Կ. Պոլսոյ, Ուղուն Չարշի, 402

Փորագրատանս մէջ կը փորագրուին մեծ խնամօք և փութով ամէն տեսակ կնիք և պատկեր՝ լաստիկի, փայտի, և մետաղներու վրայ, կը փորագրուին տըպագրական ամէն տեսակ և ամէն լեզուէ տառերու պողպատներ, կը պատրաստուին կալվանօ կաղապարներ, զինկոյէ տառեր և թուանշաններ, ևն. ևն:

Ա.ԺԱՆ ԳՐԵԱՆՔ

Պատիւ ունիմ ծանուցանել Արգոյ հասարակութեան և ի մասնաւորի Պատ. յաճախորդացս թէ՛ մեծանուն հեղինակ Ա. Մ. Գարագաշեան էֆէնտիի հետեւեալ երկասիրութիւններն, զոր մինչեւ ցարդ ես կը տպէի և կը վաճառէի, այժմ Հեղինակին և մեր հաճութեամբ յանձնած եմք այդ տպագրութեանց և վաճառման իրաւունքը, նախկին փորձ և հաւատարիմ աշակերտիս և այժմ յաջորդիս, գրավաճառ-տպագրիչ և կազմարար Միհրան էֆէնտի Փափագեանի, որոյ կեդրոնատեղին է, Չագմագճըլար եօգուչու, Զիւմպիլլի խանի մէջ, վարի յարկ թիւ 18, 19, 21:

Աշխարհագրութիւն Բնական պտկերդ. 2 20

» Ուսումնական 4

» Քաղաքական 4

» Քաղաք. և Բնակ. 6

» Քաղ. Բնակ. Ուս. 10

Ընթերցարան կամ Արմենակ պտկերդ. 2

Հատորներ քաղաքաց. ի նախնաց 8

Համակնի կամ Փղբիկ քարտուղար. 5

Պատմութիւն Հայոց 3

Պատմութիւն Սրբազան 4

Սկզբունք Գերականութեան 1

Գերականութիւն Գործնական 6

Գերականութիւն Դպրութիւն 6

Գերական Գաղիերէն Բ. տպագր. 1

Հեգարան 100 հատը 15 դրուչ.

Բերական 100 հատը 6 »

Բերական պատկերաղարդ 100ը 10 դրչ.

Համառօտ Բերականութիւն 60 փրչ.

Աշխարհա. Բերականութիւն 100 փրչ.

Ընդ մամլով Ա. և Գ. Ընթերցարանք

Հետեւաբար կը հրաւիրեմ իմ ազնիւ յաճախորդներս որ, երբ վերոյիշեալ գրքերէն պէտք մի ունենան, հաճին գիմել ուղղակի յիշեալ էֆէնտիին, իբրեւ Գաւաքեան: Վարժարանաց և մեծաքանակ գնողաց համար 100ը 20 դրչ.

ՓԱՆԳԱՅԵԱՆ

ՄԱՆ. — Կը խնդրենք մասնաւորապէս մեր գաւառաց Պատ. յաճախորդներէն, որ երբ գիրք յանձնարարեն, չմոռնան նշանակել նաև Հեղինակին անունը զի Գարագաշեան էֆէնտիի գրոց գնածերն ևս կան:

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՓԱՓԱՅԵԱՆ

ԱՐՏՈՆԱՏԵՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՄԻՀՐԱՆ Յ. ՓԱՓԱՅԵԱՆ

Կ. Պոլսոյ, Զիւմպիլլի խան, թիւ 18, 19, 21